

**ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԳԱԼՍՏՅԱՆ ԽԱԶԻԿ ՍԱՄՎԵԼԻ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԻԳ.00.01 “Քաղաքական գիտության տեսություն”
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր Մ.Մ. Մարգարյան
քաղ. գիտ. դոկտոր Ա.Վ.Աթանեսյան
քաղ. գիտ. դոկտոր Լ.Ղ. Շիրինյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2017թ. ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 «Քաղաքագիտություն» մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, 0037 Երևան, Ուլնեցու փողոց 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2017թ. մարտի 27-ին:

056 մասնագիտական խորհրդի քարտուղար
պատմական գիտությունների դոկտոր

Պ.Ա. Չոբանյան

Հետազոտության արդիականությունը:

Ժամանակակից մարդկային հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում ակտիվ վերափոխումներ են ընթանում: Նման գլոբալ փոփոխությունները, բնականաբար, ազդում են նաև հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ու քաղաքականության իրականացման մեթոդաբանության վրա՝ այստեղ նույնպես առաջադրելով նոր օրակարգեր: Մասնավորապես, արդի հասարակական-քաղաքական իրողությունների պայմաններում, երբ քաղաքականության տարածաժամանակային չափումներն ակնհայտ փոփոխության են ենթարկվում, երբ գլոբալ անորոշությունները, քաղաքական ճգնաժամերն ու ներքաղաքական կոնֆլիկտները դարձել են դարաշրջանի հիմնական բնութագրիչները, երբ իշխանության իրականացման նախկին՝ հրաման-ենթարկում ուղղահայաց կառուցակարգերը փոխարինվում են ավելի փափուկ մեխանիզմներով, հասարակական-քաղաքական դիսկուրսում ավելի պահանջված են դառնում երկխոսության տեխնոլոգիաները, իսկ երկխոսության հիմնախնդրի ու քաղաքական երկխոսության նոր հարացույցի ձևավորմանն ու երկխոսության հաղորդակցական ներուժի բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունները ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն ու արդիականություն:

Նույնը վերաբերում է նաև արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացներին: Բանն այն է, որ գնալով նորանոր տարածաշրջաններ, պետություններ և ներպետական դերակատարներ՝ քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ, սոցիալական խմբեր ու մարդիկ են ներգրավվում ժողովրդավարացման գործընթացներում, որոնք, իրենց հերթին, պահանջում են սոցիալական ու քաղաքական շահերի համաձայնեցման նոր ընթացակարգեր, փոխզիջումային որոշումների ընդունման պրակտիկ հմտություններ, իշխանության իրականացման ավանդական՝ գծային, մենախոսային հաղորդակցություններից անցում դեպի ոչ գծային, երկխոսության ռազմավարությունների նախապատվություն ու դրանց առավել հաճախակի կիրառում:

Արդի հայաստանյան հասարակական-քաղաքական իրողությունների համատեքստում նույնպես անփիճելի է քաղաքական երկխոսության հիմնախնդրի կարևորությունը: Էսորիդային Միության կազմալուծումից հետո Հայաստանի Հանրապետությունը հետխորհրդային նորանկախ երկրներից շատերի նման սկսեց քաղաքական համակարգի ժողովրդավարացման, քաղաքական նոր իրողություններին համապատասխան պետականաշինության ու ինստիտուցիոնալ

բարեփոխումների գործընթացը: Անկախության առաջին իսկ տարիներից սկսած՝ մեր երկրի քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացները, բախվելով օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի մի շարք լուրջ հիմնախնդիրների, ընթացան ոչ այն խորությամբ ու արագությամբ: Հասարակության սոցիալական, տնտեսական ու քաղաքական ոլորտներում իրականացված երբեմն հապճեպ, երբեմն չարդարացված «նորարարությունները», ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների ձևախեղումը, պետություն-հասարակություն, իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունների արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը քանիցս ներքաղաքական ճգնաժամերի ու բախումնային իրավիճակների առիթ հանդիսացան՝ հայ հասարակությանը ներքաշելով երկպառակության, անվստահության ու անհանդուրժողականության կործանարար հորձանուտ:

«Քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացը դեռևս շարունակվում է. ժողովրդավարությունը Հայաստանում այսօր գտնվում է կայացման ու կայունացման փուլում: Հետևաբար, ժողովրդավարության համախմբման փուլում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կայացման, ինստիտուցիոնալ բարեփոխումներն առանց ցնցումների իրենց տրամաբանական ավարտին հասցնելու տեսանկյունից խիստ արդիական են դառնում քաղաքական երկխոսության թեմատիկային առնչվող, տեսական ու գործնական նշանակություն ունեցող հետազոտությունների իրականացումը, հասարակության քաղաքական կյանքում երկխոսության լայն կառուցակարգերի ներմուծումը, դրանց ինստիտուցիոնալ ամրագրումն ու հայաստանյան հասարակության քաղաքական գիտակցության մեջ երկխոսության մշակույթի ձևավորումը՝ որպես համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր նախապայման:

Ատենախոսության **հետազոտության օբյեկտն է** արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում քաղաքական երկխոսության հիմնախնդիրը, իսկ **առարկան՝** Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարական բարեփոխումների գործում քաղաքական երկխոսության դերի և նշանակության իմաստավորումն ու արժևորումը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության **նպատակն է՝** բացահայտել քաղաքական երկխոսության կառուցվածքային առանձնահատկությունները, կարևորել արդի փոխակերպվող հասարակական-քաղաքական հարաբերություններում երկխոսության դերն ու նշանակությունը, վերհանել Հայաստանի Հանրապետության

քաղաքական համակարգի ժողովրդավարական համախմբման համատեքստում երկխոսության արակտիկաների ինստիտուցիոնալացման ու երկխոսության մշակույթի ձևավորման վրա ազդող գործոնները:

Աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ **հետազոտական խնդիրները**.

- Բացահայտել քաղաքական երկխոսության երևույթի հասարակական-քաղաքական ընկալման փոխակերպման հիմնական օրինաչափությունները անտիկ, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանի հոգևոր մշակույթային ժառանգության, հատկապես՝ հետմոդեռնիստական իրողությունների համատեքստում:
- Քննության առնել հետսառըպատերազմյան աշխարհակարգի հիմնական հարացույցերն ու հիմնավորել քաղաքագիտության բնագավառում նոր հարացույցի՝ քաղաքական երկխոսութաբանության անհրաժեշտությունը:
- Վերհանել քաղաքական երկխոսութաբանության խնդրային ու առարկայական դաշտի ձևավորման հետ կապված հիմնահարցերը՝ առանձնացնելով HOMO DIALOGUS-ի կերպարը՝ որպես քաղաքական երկխոսութաբանության հիմնական պրոբլեմ:
- Բացահայտել քաղաքական երկխոսության հաղորդակցության առանձնահատկություններն ու հիմնավորել սոցիալ-քաղաքական պրակտիկայում դրանց ներդրման անհրաժեշտությունը:
- Դիտարկել արդի հասարակական-քաղաքական իրողությունների համատեքստում իշխանության իրականացման երկխոսության ռազմավարությունների կիրառման հնարավորությունները:
- Ժողովրդավարության «երրորդ ալիքի» ու հետխորհրդային երկրների փորձի համատեքստում բացահայտել ժողովրդավարության երկխոսության անցման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:
- Դիտարկել էթնոչափագիտական մեթոդաբանության կիրառելիությունը քաղաքական երկխոսության մշակույթի ուսումնասիրման գործում ու բացահայտել քաղաքական երկխոսության մշակույթի դերակատարումը ժողովրդավարության համախմբման համատեքստում:
- Արժևորել Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարացման ու ժողովրդավարության համախմբման համատեքստում երկխոսության արակտիկաների ինստիտուցիոնալացման ու երկխոսության մշակույթի ձևավորման

գործոնները՝ որպես համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր նախադրյալներ:

Հետազոտության մեթոդաբանությունը: Առենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել գիտական հետազոտության ու քաղաքական գիտության ընդհանուր և առանձնահատուկ մեթոդաբանական սկզբունքներն ու եղանակները: Մասնավորապես, գիտական հետազոտության ընդհանուր մեթոդաբանական զինանոցից հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական, համեմատական և համակարգային ուսումնասիրության մեթոդները: Առաջինը թույլ է տվել բացահայտել քաղաքական երկխոսության երևույթի ծագման և զարգացման օրինաչափությունները քաղաքական մտքի պատմության համատեքստում, համեմատական մեթոդը մեծապես նպաստել է քաղաքական երկխոսության հաղորդակցության, ժողովրդավարության «երրորդ ալիքի» երկրների ժողովրդավարության անցման և համախմբման առանձնահատկությունների բացահայտմանը, համակարգային մեթոդն իր հերթին թույլ է տվել քաղաքական երկխոսության երևույթը դիտարկել համալիր ամբողջության մեջ, ինչպես նաև ուսումնասիրել քաղաքական երկխոսության բանությունը խնդրային և առարկայական դաշտի հստակեցման հետ կապված խնդիրները:

Գիտական հետազոտության առանձնահատուկ սկզբունքներից և մեթոդներից աշխատանքում օգտագործվել են ինդետերմինիզմի, խորհրդանշական փոխազդեցության (սիմվոլիկ ինտերակցիոնիզմ), էթնոչափագիտական հետազոտության մեթոդները: Հատկապես հետմոդեռնիստական իրողությունների համատեքստում քաղաքական երկխոսության երևույթի բացահայտման գործում ինդետերմինիզմի մեթոդաբանական մոտեցումը թույլ է տվել քաղաքական գործընթացները համընդհանուր պատճառահետևանքային կապերին զուգահեռ դիտարկել նաև գլոբալ անորոշություններով պայմանավորված քաղաքական օրինաչափությունների տեսանկյունից: Զ. Միդի առաջ քաշած խորհրդանշական փոխազդեցության (սիմվոլիկ ինտերակցիոնիզմ) մեթոդի օգնությամբ քաղաքական երկխոսության երևույթը ուսումնասիրվել է սոցիալական փոխգործողության հայեցակարգի լույսի ներքո՝ բացահայտելով երկխոսության կողմնորոշում ունեցող հասարակայնության հետ կապերի (DOPR) տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները քաղաքական գործընթացներում: Իսկ հոլանդացի հետազոտող Գ. Հոֆսթեդի էթնոչափագիտական հետազոտությունների մեթոդաբանությունն ու դրան բնորոշ դասիչները կիրառվել են ժողովրդավարության անցման համատեքստում քաղաքական

երկխոսության մշակույթի դրսևորման առանձնահատկությունների բացահայտման համար:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Քաղաքական երկխոսության թեմատիկան պատմական բոլոր ժամանակաշրջաններում էլ եղել է քաղաքական մտքի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Այդ առումով հիմնախնդրի տեսական ուսումնասիրությունները սկիզբ են առնում դեռևս Անտիկ ժամանակաշրջանից¹ հին հունական հասարական-քաղաքական մտքի ժառանգության շրջանակներում, որտեղ երկխոսությունը, երկխոսության տեսությունն ու հոետորական արվեստը հասցված էին կատարելության՝ հանդիսանալով հին հունական քաղաքակրթության մեծագույն ձեռքբերումներից մեկը՝ որպես մարդկանց՝ միմյանց հետ շփվելու բնական պահանջի բարձրագույն դրսևորում²:

Միջնադարյան ժամանակաշրջանում երկխոսության հիմնախնդիրն իր տեղը զիջում է աստվածաբանական դոգմատիզմին ու եկեղեցական սխոլաստիկային, սակայն նոր թափով է զարգանում հատկապես կրոնական էկզիստենցիալիզմի ներկայացուցիչների՝ Մ. Բուբերի³, Ֆ. Ռոզենցվեյգի⁴, Ֆ. Էրների⁵, Է. Լեվինասի⁶, Ս. Ֆրանկի⁷ աշխատություններում, որոնցում, ընդհանուր առմամբ, մերժվում էր «մարդու մենության» մասին միջնադարյան աստվածաբանական թեզը՝ փոխարինելով այն մարդ-Աստված երկխոսության կառուցակարգով ու դրանից բխող մարդ-աշխարհ, «ԵՍ-ԴՈՒ», «ՄԵՆ-Ք» երկխոսությանին հարաբերությունների հարուստ բազմազանության տեսականով: Իսկ արդեն էպիտիկ էկզիստենցիալիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մ. Բախտինի⁸ մոտ երկխոսության երևույթի ընկալումը հասնում է «բացարձակության» աստիճանի: Ընդհանրապես, Մ. Բախտինի դերը

¹ Տե՛ս *Ստատ. Դիալոգի. Մ., 1986, Արիստոտել. Սոցիալիզմ // Արիստոտել. Սոցիալիզմ: Մ., 1983.*

² Տե՛ս *Եսենգալիևա Վ. Ա. Возвращаясь к теории античного диалога. [library.wkai.kz/index.php?option=com_docman...doc]*

³ Տե՛ս *Բուբեր Մ. Два образа веры. (пер. с нем.) М., 1995.*

⁴ Տե՛ս *Մաքուրա Ա. Онтология межрелигиозного диалога в философии Франца Розенквейга. [http://www.jcrelations.net/]*

⁵ Տե՛ս *Էրներ Փ. Слово и духовные реальности (Фрагменты) // От Я к Другому. Сб. пер. по проблемам интересубъективности, коммуникации, диалога. Минск, 1997.*

⁶ Տե՛ս *Լեվինաս Է. Путь к Другому (пер. Е. Бахтиной), СПб, 2007.*

⁷ Տե՛ս *Ֆրանկ Ս. Духовные основы общества. М., 1992.*

⁸ Տե՛ս *Բախտին Մ. М. Проблемы поэтики Достоевского. 4-е изд. М., 1979., Бахтин М. М. Эстетика словесного творчества. М., 1979.*

բավականին մեծ է խորհրդային մշակութաբանական, իսկ հետագայում նաև ռուսական երկխոսութաբանական դպրոցի ձևավորման գործում: Ընդ որում, այդ դպրոցի ներկայացուցիչներից հետազոտության շրջանակներում, քաղաքական երկխոսութաբանության արդիականության հիմնավորման համար հիմք են ծառայել Վ. Բիբլերի⁹, Է. Կոչետովի¹⁰, Վ. Մեծուևի¹¹, Ս. Պոցելուևի¹² աշխատությունները:

Թեմային նվիրված, քաղաքական կոնֆլիկտների ու դրանց կարգավորման ուղիներին վերաբերող ուսումնասիրությունները հատկապես լայն թափ են առնում Երկրորդ աշխարհամարտից հետո: Ընդ որում, եթե կոնֆլիկտների պրոբլեմատիկային նվիրված հետազոտական «բումի» առաջին փուլում գերակշռող էին կոնֆլիկտների խաղաղ կարգավորման, բանակցություններին նվիրված աշխատանքները¹³, ապա Սառը պատերազմի ժամանակաշրջանից սկսած նկատվում է թեմատիկայի «շեղում» դեպի «գրոյական» գումարով խաղերի տեսության լայն կիրառում, որի տրամաբանությունը հանգում էր «հաղթանակ-պարտություն» ռազմավարությունների միջոցով կոնֆլիկտի մեջ ներգրավված կողմերից մեկի շահերի լիակատար բավարարմանը, ընդհուպ մինչև մրցակից-հակառակորդների ֆիզիկական ոչնչացում¹⁴:

Հետաառըպատերազմյան ժամանակահատվածում ասպարեզ իջան նոր գիտական հարացույցեր ու հայեցակարգեր: Ֆ. Ֆուկույաման¹⁵ սկիզբ դրեց արևմտյան ազատական ժողովրդավարության մոդելի էյֆորիկ հաղթանակի տեսլականին, իսկ Սառը պատերազմի ավարտից հետո ձևավորված հաջորդ տեսական հայեցակարգը, որը բավականին մեծ արձագանք ունեցավ հասարակագիտական շրջանակներում, պատկանում

⁹ Տե՛ս **Библер В.** От наукоучения к логике культуры(Два философских введения в двадцать первый век). М., 1991.

¹⁰ Տե՛ս **Кочетов Э.** Диалог: Диалогистика как наука о судьбах человека и мира в контексте глобальных перемен. М., 2011.

¹¹ Տե՛ս **Межуев В.** Диалог между цивилизациями и Россия// От диалога цивилизации к сотрудничеству и интеграции(Якунин В.И., Сулакшин С.С., Межуев В.М. и др.). М., 2006.

¹² **Поцелуев С.П.** Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии. Ростов н/Д, 2010.

¹³ Տե՛ս **Ch. Osgood.** An Alternative to War or Surrender. Urbana. 1962., **H. Raiffa.** The Art and Science of Negotiation. Cambridge. 1982., **R. Fisher, W. Ury.** Getting to YES.. Boston.1981., **D. Lax, J. Sebenius.** The Manager as Negotiator. N.Y. 1986., **I. W. Zartman. M. Berman.** The Practical Negotiator. New Haven. 1982.

¹⁴ Տե՛ս **S. Siegel, L. Fouraker.** Bargaining and Group Decision-Making. N. Y. 1960., **R. Luce. H Raiffa.** Games and Decisions: Introduction and Critical Survey. N.Y. 1957.,**A. Rapoport.** Fights, Games and Debates. Ann Arbor. 1960.

¹⁵ Տե՛ս **Фукуяма Ф.** Конец истории и последний человек. М., 2004.

էր ամերիկյան մեկ այլ հայտնի քաղաքագետի՝ Սամուել Հանթինգտոնին¹⁶, որն իր «քաղաքակրթությունների բախման» հավակնոտ հարացույցով փորձում էր տալ հետսառըպատերազմյան աշխարհակարգի նոր ուրվագիծը: Արդեն XX դարի 90-ականների վերջին, սկզբում քաղաքական, իսկ այնուհետև՝ նաև քաղաքագիտական շրջանակներում առաջ քաշվեց «քաղաքակրթությունների երկխոսության» հարացույցը: Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մ. Հաթամին¹⁷ հանդես եկավ քաղաքակրթությունների երկխոսության նախաձեռնությամբ՝ առաջարկելով այս հարացույցը որպես միջազգային հարաբերությունների նոր որակի անցման գլխավոր գործոն-հրամայական: Հենց Իրանի նախագահի առաջարկով ՄԱԿ-ը միաձայն ընդունեց բանաձև, որում, ողջունելով միջազգային հանրության կոլեկտիվ ջանքերը երրորդ հազարամյակի նախաշեմին քաղաքակրթությունների միջև կառուցողական երկխոսության միջոցով փոխըմբռնման հասնելու ուղղությամբ՝ 2001 թվականը հռչակվում էր քաղաքակրթությունների երկխոսության տարի¹⁸: Իսկ ՄԱԿ-ի 56-րդ նստաշրջանում ընդունվեց «Քաղաքակրթությունների միջև երկխոսության գլոբալ օրակարգ» անվանումը կրող բանաձևը, որը կանխորոշում էր XXI դարում մարդկության զարգացման հիմնական ուղենիշները¹⁹: Քաղաքական նախաձեռնություններին զուգահեռ ակտիվացան նաև երկխոսության հիմնախնդրին նվիրված հասարակագիտական ուսումնասիրությունները:

Եթե փորձենք ներկայացնել այդ ուղղությամբ տարվող տեսական ու կիրառական հետազոտությունները, ապա երկխոսության հարացույցերը հարաբերականորեն կարելի է բաժանել մի քանի ճյուղերի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե երկխոսության հիմնախնդրի հատկապես որ կողմն են ընդգրկում այդ ուսումնասիրությունները: Այդ տեսանկյունից, նախևառաջ, հարկ է առանձնացնել խաղաղության հետազոտությունները՝ որպես ուսումնասիրության առավել համընդգրկուն օբյեկտ պարունակող երևույթ, քանի որ հենց այս մակարդակում է, որ խաղաղության ռազմավարությունները հիմնականում դիտարկվում են արժեքային (աքսիոլոգիական) հարթությունում: Խաղաղության հետազոտությունների,

¹⁶ Տե՛ս *Хантингтон С.* Столкновение цивилизаций. М., 2003.

¹⁷ Տե՛ս «Выступление Сейеда Мохаммада Хатами, президента Исламской Республики Иран 21 сентября 1998 года на сессии Генеральной Ассамблеи ООН» [<http://constitutions.ru.archives/590>]

¹⁸ Տե՛ս A/RES53/22. Год диалога между цивилизациями под эгидой ООН [<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N98/776/13/PDF/N9877613.pdf?OpenElement>]

¹⁹ Տե՛ս A/RES/56/6 Глобальная повестка дня для диалога между цивилизациями [<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N01/475/44/PDF/N0147544.pdf?OpenElement>]

հակամարտությունների փոխակերպման ու HOMO DIALOGUS-ի իմացաբանական ու գոյաբանական շերտերի բացահայտման գործում մեծ է հայտնի կոնֆլիկտաբան Յ. Գալթունգի²⁰ դերը, ով առանձնացնում է խաղաղության էմպիրիկ, քննադատական ու կառուցողական ուսումնասիրությունները՝ նշելով, որ միայն խաղաղության ուսումնասիրությունների՝ որպես առարկայի արժեքային կողմնորոշումն է, որ այն դարձնում է sui generis²¹:

Հաջորդը բանակցությունների տեսությունն է²², որը բացահայտում է երկխոսության առավել առարկայական՝ ինստիտուցիոնալ-գործառնական կողմը: Երրորդ խումբը հենց երկխոսության հիմնախնդրին նվիրված ուսումնասիրություններն են, որոնք ընդգրկում են երկխոսության ինչպես քաղաքական-քաղաքակրթական, այնպես էլ քաղաքական-գործնական կողմերը: Քաղաքակրթությունների երկխոսության թեմատիկան գիտական հենքի վրա հատկապես խորությամբ ուսումնասիրվում է բազմաքաղաքակրթական ակունքներ ունեցող երկրներում, ինչպիսին, օրինակ Ռուսաստանն է, որի քաղաքագիտական մտքի շրջանակներում է, որ նոր թափ է առնում այս հարացույցը՝ պարբերաբար հրապարակ հանելով միջնակությանի, քաղաքակրթական երկխոսությանը նվիրված գիտական ժողովածուներ²³:

²⁰ Տե՛ս **Galtung J.** Peace by Peaceful Means: Peace and Conflict, Development and Civilization, London, SAGE Publications, 1996, **Galtung J.** Transcend and Transform: An Introduction to Conflict Work, Colorado, Paradigm Publishers, 2004, **Galtung J.** A Theory of Conflict: Overcoming Direct Violence, Transcend University Press, 2010.

²¹ Տե՛ս **Գալթունգ Յ.** Խաղաղություն խաղաղ միջոցներով. Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր., 2005, էջ 24-30:

²² Տե՛ս **Fisher R., Ury W.** Getting to YES. Negotiating an Agreement Without Giving In. Boston.1981., **Raiffa H.** The Art and Science of Negotiation. Cambridge. Harvard Univ. Press,1982, **Zartman I. W., Berman M.** The Practical Negotiator. New Haven. Yale University Press 1982, **Elgstrom O.** Foreign Aid Negotiations. Brookfield, 1992, **Mitchel C.** The Structure of International Conflict, N. Y., 1991, **Burton J.** Conflict resolution: towards problem solving // Peace and Conflict Studies, vol 4, N 2, 1997[www.gmu.edu/academic/pcs/burton], **Беланже Л.** Переговоры, СПб, 2002, **Доналдсон М.** Умение вести переговоры, М., 2000, **Лебедева М.** Вам предстоит переговоры. М., 1993, **Линкольн У.** Переговоры, СПб, 1998, **Нергеш Я.** Поле битвы – стол переговоров. М.,1989, **Мастенброк В.** Переговоры. Калуга, 1997, **Мокищанцев П.** Психология переговоров. М., 2002, **Митрошенков О.** Эффективные переговоры. М., 2000, **Спенгл М., Айзенхарт М.,** Переговоры: решение проблем в разном контексте. Харьков, 2009.

²³ Տե՛ս Դիалог ակտյւր ւ ցլոբալիզիւրյուցեմս ւ րլե: ւրոււոզրենչեսկե ասպեկտս / ըդ. Յ.Տ. Տեփլն, Ա.Ա. Գւսեյնու. Մ., Նաւկա, 2005, Օտ ժլալոցա ճլվլլզաւլլաւլլ կ Տրոճրնլչեսւ ւ ինտեգրաւլ. Նաբրոսկս թրոբլեմոցո անալլզա / ըդ. Տ.Տ. Տուլակշլն. Մ., Նաւչնլլ էքսփերլմենտ, 2006, ժլալոցա կւլտյւր ւ ճլվլլզաւլլաւլլ / ըդ. Ա.Օ. Շւբարյան. Մ., Նաւկա, 2006.

Երկխոսության հիմնախնդրի ուսումնասիրման քաղաքական-գործնական կտրվածքով մասնագիտական մոտեցումները ներառում են պետության ներքաղաքական ոլորտին առնչվող այնպիսի հիմնահարցերի քննարկումը, ինչպիսիք են իշխանության իրականացման երկխոսության ռազմավարությունների կիրառումը²⁴, պետության և հասարակայնության հետ կապերի երկխոսության տեխնոլոգիաների մշակումը²⁵, ժողովրդավարության համախմբման²⁶ (կոնսոլիդացիայի) գործընթացում քաղաքական երկխոսության մշակույթի²⁷ դերակատարման, հասարակական-քաղաքական երկխոսության կամ Հաբերմասի բնորոշմամբ, դիսկուրսային պրակտիկաների²⁸ ուսումնասիրումը,

²⁴ Տե՛ս **Parsons T.** Power and the Social System // Power/ed. By S. Lukes. Oxford: Blackwell, 1986, **Arendt H.** Communicative Power // Power/ed. By S. Luke s. Oxford: Blackwell, 1986, **Фуко М.** Интеллектуалы и власть: Избранные политические статьи, выступления и интервью (Пер. с франц. С. Ч. Офертаса под общей ред. В. П. Визгина и Б. М. Скуратова), М., 2002, **Комоцкий Б.** Мишель Крөзье как политолог // Социально-политические науки. М., 1990/9.

²⁵ Տե՛ս **Pearson R.** Beyond Ethical Relativizm in Public Relations: Coorientation, Rules, and the Idea of Communication Symmetry // Journal of Public Relations Research. 1989, vol. 1, **Grunig J., Hunt T.** Managing Public Relations. N.Y., 1984, **Botan C.** Ethics in Strategic Communication Campaigns: the Case for a New Approach to Communication with the Public// Journal of Business Communication. 1997/33, **Kent M., Taylor M.** Toward a dialogic theory of public relations // Public Relations Review, 2002, vol.28, N1, **Зайцев А. Р.** Буркарт: PR диалог и консенсус-ориентированные связи с общественностью // Общество: политика, экономика, право. 2013/4.

²⁶ Տե՛ս **Пиеворски А.** Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. М., 2000, **Хантингтон С.** Третья волна. Демократизация в конце XX века. / пер. с англ./ М., 2003, **Карл Т., Шмюттер Ф.** Пути перехода от авторитаризма к демократии в Латинской Америке, Южной и Восточной Европе // Международный журнал социальных наук. 1993/3, **O'Donnell G.** Illusions about Consolidation // Journal of Democracy. 1996, Vol. 7., № 2, **Lin Z.J., Stepan A.** Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore, London, 1996, **Terry S.** Thinking about Post-Communist Transition: How Are They?// Slavic Review, 1993, N52/2, **Diamond L.** Developing Democracy: Toward Consolidation. Baltimore, 1999, **Brzezinski Z.** The Great Transformation. // The National Interest 1993/33.

²⁷ Տե՛ս **Алмонд Г., Верба С.** Гражданская культура:политические установки и демократия в пяти странах. М., 2014, , **Hofstede G.** Dimensionalizing Cultures: The Hofstede Model in Context. Online Readings in Psychology and Culture, 2011.

²⁸ Տե՛ս **Хабермас Ю.** Моральное сознание и коллективное действие. СПб, 2001, **Хабермас Ю.** Вовлечение другого. Очерки политической теории. СПб, 2001

երկխոսության՝ որպես «դելիբերատիվ ժողովրդավարության» մոդելի²⁹ գործնական դրսևորման և այլ խնդիրներ:

Ինչ վերաբերում է թեմային նվիրված հայրենական հետազոտություններին, ապա դրանք հարաբերականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ ներառվում են կոնֆլիկտաբանության, իսկ երկրորդում՝ անցումազիտության հարացույցի շրջանակներում տարվող ուսումնասիրությունները: Երկխոսության հիմնախնդրի ուսումնասիրման գործում հայրենական հեղինակներից, նախևառաջ, առանձնանում է Հ. Քոթանջյանը, որի «Համաձայնության-հակամարտության էթնոքաղաքագիտություն» աշխատությունը³⁰ հետխորհրդային իրականությունում առաջիններից էր, որտեղ հեղինակը էթնոքաղաքական հակամարտությունների ծագման, զարգացման օրինաչափությունների և կարգավորման հեռանկարների ուսումնասիրման գործում առաջ է քաշում հակամարտություն-համաձայնություն հարացույցը՝ կիրառելով բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանությունը: Ինչպես նշում է Ժ. Տոչենկոն, իր վերլուծություններում Հ. Քոթանջյանը հանգում է ոչ միայն միջքաղաքակրթական, այլև ներքաղաքակրթական հարաբերությունների հարցերին, որոնք հիմքային են «մարդու իրավունքների» պաշտպանության համար և արտացոլված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»³¹:

Թեմային նվիրված գրականության տեսությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում տարվող քաղաքագիտական

²⁹ St' u **Forester J.**, Beyond Dialogue to Transformative Learning: How Deliberative Rituals Encourage Political Judgment in Community Planning Processes. // Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996, **Kotch D.**, Dialogue: An Essay in the Instrumentalist Tradition. // Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996, **Kotch D.**, Dialogue: An Essay in the Instrumentalist Tradition. // Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996, **Этциони А.** От империи к сообществу: новый подход к международным отношениям. (Пер. с англ. под ред. В.Л. Иноземцева), М., 2004, **Поцелуев С.** Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии. Ростов-на-Дону, 2010.

³⁰ St' u **Котанджян Г.** Этнополитология консенсуса-конфликта: Цивилизационный аспект национальной безопасности. 2-е изд. М., 1992.

³¹ St' u **Քոթանջյան Հ.** Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., 2010, էջ 209:

հետազոտություններում կոնֆլիկտաբանության³² ընդհանուր խնդիրներին զուգահեռ ավելի գերակշռող են Արցախյան հիմնախնդրին ու այդ հակամարտության կարգավորման գործընթացի առանձին կողմերին նվիրված ուսումնասիրությունները³³: Որոշակի առումով հայրենական քաղաքագիտական դպրոցին բնորոշ թեմատիկ նման նախապատվությունը հասկանալի է, քանի որ հայ ժողովրդի կենսական շահերի բավարարման ու ՀՀ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից անժխտելի է Արցախյան հիմնահարցի կարևորությունը: Միաժամանակ փաստ է, որ մեր պետության արտաքին քաղաքականության գերակայություն համարվող Արցախյան հիմնահարցի արդարացի ու հայանպաստ լուծումն ուղղակիորեն կապված է նաև ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման, պետական կառավարման արդյունավետության բարձրացման, պետություն-հասարակություն, իշխանություն-ընդդիմություն քաղաքակիրթ փոխհարաբերությունների հաստատման հրամայականի հետ: Այդ պատճառահետևանքային կապը նշմարվում է նաև հայրենական հետազոտություններում, որտեղ ծավալային առումով քիչ չեն հենց ՀՀ քաղաքական համակարգի փոխակերպման տարբեր օրինաչափությունների բացահայտման տեսական ուսումնասիրությունները³⁴:

³² Տե՛ս **Կотанджян Г.** Этнополитология консенсуса-конфликта: Цивилизационный аспект национальной безопасности. 2-е изд. М., 1992, **Ենգոյան Ա.** Քաղաքական կոնֆլիկտներ, Եր., 2003, **Атанесян А.** Актуальные проблемы политических и конфликтных коммуникаций. Ер., 2008.

³³ Տե՛ս **Քրթանջյան Հ.** Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., 2009, **Hovhannissyan N.** The Karabakh problem. The Thorny Road to Freedom and Independence. Yerevan, 2004, **Минасян С.** Сдерживание в Карабахском конфликте, Ер., 2016, **Минасян С.** Нагорный Карабах после двух десятилетий конфликта: неизбежная пролонгация стаус-кво?! Аналитические доклады Института Кавказа, N 2, Ер., 2010, **Зоян С.** Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., 2001, **Галстян Х.** Геополитическая трансформация Карабахского конфликта // Актуальные проблемы социальных коммуникаций и связей с общественностью. Материалы Международной научно-практической конференции, Ч 1, Краснодар, Кубан. Гос. Ун-т, 2008, **Մանասյան Ա.** Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003 **Բարսեղյան Ղ.** Ղարաբաղյան հակամարտություն. Պատմական, իրավական և այլ ասպեկտներ // 21-րդ դար, Եր., 2005 /1(7), **Փալստյան Խ** Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները // 21-րդ դար, Եր., 2005 /4:

³⁴ Տե՛ս **Енгоян А.** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. Ер., 2011г, **Маркаров А.** Полупрезидентализм в контексте постсоветской трансформации. Ер., 2008, **Погосян Г.** Современное армянское общество:

Ինչ վերաբերում է բուն քաղաքական երկխոսության թեմատիկային առնչվող հետազոտություններին³⁵, ապա դրանք ավելի սակավաթիվ են ու անդրադառնում են այդ երևույթի ուսումնասիրման առանձին կողմերին:

Քաղաքական երկխոսության հիմնախնդրի տեսա-մեթոդական ու գործնա-կիրառական տեսանկյուններին նվիրված սույն հետազոտությունը, թերևս, հայրենական քաղաքագիտության մեջ առաջիններից է, որ համալիր հետազոտության օբյեկտ է դարձնում քաղաքական երկխոսության երևույթը՝ արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում, ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ պետության ներսում ծագած կոնֆլիկտների ու վիճահարույց հարցերի կարգավորման, համատեղ որոշումների ընդունման ու ժողովրդավարության համախմբման տեսանկյունից՝ այն դիտարկելով որպես հասարակության քաղաքական համակարգում ձևավորվող հաղորդակցական մոդելներից առավել արդյունավետն ու ընդունելին: Աշխատանքը երկխոսության ու անցման հարացույցների յուրօրինակ սինթեզ է, որոնց լույսի ներքո էլ դիտարկվում են ՀՀ քաղաքական համակարգի անցման և ժողովրդավարության համախմբման օրինաչափությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի շրջանակներում առանձնացված հետազոտական խնդիրների հաղթահարումը թույլ է տալիս առաջ քաշել մի շարք տեսական ու գործնական նշանակություն ունեցող

особенности трансформации. Ер., 2006, Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, *Մարգարյան Մ.* Քաղաքական զարգացման և արդիականացման հիմնահարցեր, Եր., «Պետական ծառայություն», 2004, *Մարգարյան Մ.* Ժողովրդավարության անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում //21-րդ դար, 2005/4(10), *Թորքյան Տ.* Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիան, Եր., 2006:

³⁵ Տե՛ս **Шакарян Г., Шакарян А.** Нравственно-методологические аспекты политического диалога.// Вестник ЕГУ№2, 1998, *Մարգարյան Մ.* «Լավ կառավարման» սկզբունքների ներդրումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց, // Հայկական բանակ, 2013/1-2, *Բրուկյան Գ.* Իմաստասիրական երկխոսություններ, 2 հատորով Եր., 1985, *Հովհաննիսյան Հ.* Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները Եր., 2003, *Հովհաննիսյան Հ.* Քաղաքացիական և քաղաքական երկխոսության մշակույթ. Համաձայնողական տեխնոլոգիաներ // Խաղաղության մշակույթ. Ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն միջազգային խորհրդածողովի նյութեր, Եր. 1999:

գաղափարներ ու դրույթներ, որոնք որոշակի գիտական նորույթ են պարունակում:

Մասնավորապես՝

- Երկխոսությունը որպես քաղաքական հաղորդակցության տարատեսակ, դիտարկվել է այդ երկույթի ծագման և զարգացման ամբողջության համատեքստում, որը թույլ է տվել բացահայտել պատմական տարբեր ժամանակաշրջաններին բնորոշ քաղաքական երկխոսության հարաբերությունների առանձնահատկությունները:
- Հետաառըպատերազմյան աշխարհակարգի հիմնական հարացույցերի քննական վերլուծության արդյունքում հիմնավորվել է քաղաքական գիտության բնագավառում նոր հարացույցի՝ քաղաքական երկխոսութաբանության անհրաժեշտությունը:
- Հումանիտար գիտությունների խնդրային դաշտում նկատվող մարդաբանական շեշտադրումների հաշվառմամբ առանձնացվել է «HOMO DIALOGUS»-ի կերպարի ձևավորումը՝ որպես քաղաքական երկխոսութաբանության հիմնական խնդիր:
- Քաղաքական հաղորդակցության երկխոսության տեխնոլոգիաների տիպաբանության համատեքստում առաջ է քաշվել առկախված երկխոսությունների տարատեսակը, ինչպես նաև հասարակայնության հետ կապերի երկխոսության կողմնորոշում ունեցող (DOPR) մոդելը՝ որպես քաղաքականության մեջ կոնֆլիկտների կանխարգելմանն ու կարգավորմանն ուղղված PR գործողությունների արդյունավետության բարձրացման կարևոր ռազմավարություն:
- Հետազոտության շրջանակներում, զարգացնելով իշխանության հայեցակարգային վերլուծության ոչ սեկցիոն ավանդույթը, հիմնավորվել են իշխանության իրականացման գործընթացում երկխոսության ռազմավարությունների կիրառման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը և ըստ այդմ անհրաժեշտությունը:
- Բացահայտվել են Ժողովրդավարության երրորդ ալիքի երկրների անցման օրինաչափություններն ու ժողովրդավարության համախմբման գործում երկխոսության պրակտիկաների դերակատարումը: Այդ համատեքստում առանձնացվել է քաղաքական երկխոսության մշակույթը՝ որպես ժողովրդավարության համախմբման կարևոր գործոն:
- Ատենախոսության մեջ հովանդացի մասնագետ Գ. Հոֆսթեդի էթնոչափագիտական հետազոտությունների մեթոդաբանությունն առաջին անգամ կիրառվել է ժողովրդավարացման երրորդ ալիքի

ուսումնասիրման համատեքստում, որի արդյունքում բացահայտվել են ժողովրդավարության անցման գործընթացների ու քաղաքական երկխոսության մշակույթի միջև եղած կապերն ու օրինաչափությունները:

- ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարության անցման համատեքստում սահմանադրական բարեփոխումների գործընթացը դիտարկվել է կոնֆլիկտ-երկխոսությամբ հարացուցի լույսի ներքո, որտեղ ՀՀ Սահմանադրական փոփոխությունների գործընթացն արժևորվել է քաղաքական հակամարտությունների և երկխոսությամբ պրակտիկաների ինստիտուցիոնալացման հնարավորությունների տեսանկյունից:
- Հայաստանյան քաղաքական գործընթացների վերլուծության արդյունքում բացահայտվել են քաղաքական երկխոսության մշակույթին բնորոշ առանձնահատկությունները, դրա զարգացման ու արմատավորման նախադրյալներն ու գործոնները:
Հետազոտության գիտական նորույթով պայմանավորված՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**.
- Հասարակական-քաղաքական մտքի զարգացման համատեքստում քաղաքական երկխոսության՝ որպես գիտական հասկացության ու քաղաքական իրականության ընկալումը երկակի բնույթ է կրել: Այդ հայեցակարգային երկվությունը նկատելի է նաև մեր օրերում: Մասնավորապես, հետմոդեռնիստական աշխարհընկալման համատեքստում՝ գլոբալ անորոշությունների ու քաղաքականության սուբյեկտների փոխադարձ կախվածության գործոնների աճը մի կողմից առաջ է բերում երկխոսությամբ հաղորդակցությունների առավել ինտենսիվ կիրառման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ քաղաքականության թատերականացման էֆեկտի ուժեղացման հետ մեկտեղ, սահմանափակում է իրական հասարակական-քաղաքական երկխոսությունների միջոցով սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծման հնարավորությունները:
- Արդի հասարակական-քաղաքական փոխակերպումներն ուղակիորեն ազդում են քաղաքական գիտության առարկայական ու խնդրային դաշտի վրա՝ առաջ բերելով նոր հարացույցերի ձևավորման օբյեկտիվ անհրաժեշտություն: Քաղաքական երկխոսութաբանության՝ որպես քաղաքագիտական նոր հարացույցի հիմնական խնդիրն է սահմանվում մարդու՝ քաղաքական գործունեությամբ պայմանավորված նոր տեսակի՝ «HOMO DIALOGUS»-ի կերպարի ձևավորումը:

- Քաղաքական հաղորդակցության երկխոսությանին տեխնոլոգիաների համատարած կիրառումը հասարակական-քաղաքական դիսկուրս-պրակտիկաների համատեքստում քաղաքական կոնֆլիկտների կանխարգելման ու կարգավորման, ինչպես նաև քաղաքական գործընթացների արդյունավետության բարձրացման իրական ներուժ է պարունակում: Այդ տեսանկյունից հասարակայնության հետ կապերի երկխոսության կողմնորոշում ունեցող մոդելը (DOPR-Dialogue Oriented Public Relations) էապես նպաստում է հասարակության քաղաքական կյանքում երկխոսությանին պրակտիկաների ու քաղաքական երկխոսության մշակույթի ամրապնդմանը:
- Արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում, տեղեկատվական ու հաղորդակցական հասարակությունների ձևավորմանը և զարգացմանը զուգահեռ, որոշակիորեն սահմանափակվում են նաև իշխանության իրականացման «կոշտ», ուժային ռազմավարության կիրառման հնարավորությունները, իսկ իշխանության ապակենտրոնացումն ու ցանցային կառավարման տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են ստեղծում իշխանության իրականացման երկխոսությանին ռազմավարությունների ներդրման և կիրառման համար: Այդ առումով «փափուկ ուժը» դիտարկվում է որպես իշխանության իրականացման երկխոսությանին ռազմավարություն:
- Ժողովրդավարության անցման ազատականացման և համախմբման փուլերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե առաջին փուլում հնարավոր են ինչպես կոնֆլիկտային, այնպես էլ երկխոսությանին անցումներ, ապա ժողովրդավարության ինստիտուցիոնալ համախմբումը հնարավոր է բացառապես երկխոսությանին եղանակով՝ քաղաքական ինստիտուտների կառուցվածքի շուրջ հիմնական քաղաքական ուժերի միջև համաձայնության կամ լոյալության պարագայում: Այդ համատեքստում առանձնացվում են երկխոսությանին պրակտիկաների ինստիտուցիոնալացման ու քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման գործոնները՝ որպես ժողովրդավարության համախմբման կարևոր նախապայմաններ:
- Էթնոչափագիտական մեթոդաբանությունը թույլ է տալիս բացահայտել քաղաքական երկխոսության մշակույթի ազդեցությունը Ժողովրդավարության անցման և համախմբման գործընթացների վրա: Ըստ այդմ էլ կարելի է պնդել, որ իշխանությունից մեծ հեռավորությունը (PDI) դանդաղեցնում է ժողովրդավարության

համախմբման գործընթացն ու չի նպաստում երկխոսության շարունակականության ձևավորմանը: Իսկ այն հասարակություններում, որտեղ ժողովրդավարական խաղի կանոնները վերջնականապես չեն հաստատվել ու կան բազմաթիվ ինստիտուցիոնալ անորոշություններ հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ինստիտուցիոնալ-սահմանադրական դիզայնի շուրջ, հասարակական-քաղաքական «Եժժ երկխոսության» ճանապարհով խաղի կանոնների որոշակիացումն ու հստակեցումը տվյալ հասարակության քաղաքական դիսկուրսում առավել պահանջված հիմնախնդիրներից են:

- Ժողովրդավարության համախմբման համատեքստում Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կայացման, ինստիտուցիոնալ բարեփոխումներն իրենց տրամաբանական ավարտին հասցնելու տեսանկյունից արդիական են իշխանության իրականացման մենախոսային հաղորդակցությունից երկխոսայինին անցումը, քաղաքական երկխոսության կառուցակարգերի ներմուծումը, դրանց ինստիտուցիոնալ ամրագրումն ու հայաստանյան հասարակության քաղաքական գիտակցության մեջ երկխոսության մշակույթի ձևավորումը՝ որպես համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր գրավականներ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքում առաջ քաշված մոտեցումները, գաղափարներն ու առաջարկությունները որոշակիորեն հարստացնում են քաղաքական գիտության խնդրային ու առարկայական դաշտը, շրջանառության մեջ են դնում մի շարք նոր հասկացություններ՝ հիմք հանդիսանալով քաղաքագիտական նոր հարացույցի՝ քաղաքական երկխոսութաբանության ձևավորման համար: Արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների, ժողովրդավարության անցման հարացույցի համատեքստում նորովի է արժևորվում երկխոսության հիմնախնդիրը, քաղաքական հաղորդակցման երկխոսային տեխնոլոգիաների կիրառումը, HOMO DIALOGUS-ի կերպարի ձևավորումը: Հայաստանում իրականացված քաղաքագիտական հետազոտությունների շրջանակում սույն ատենախոսությունը առաջիններից է, որ քաղաքական երկխոսության հիմնախնդիրը դիտարկում է ՀՀ քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացի համատեքստում՝ ՀՀ-ում ժողովրդավարության համախմբման գործոնների շարքում առանձնացնելով երկխոսության շարունակականության ձևավորմանն ու քաղաքական երկխոսության մշակույթի

ձևավորման գործոնները: Ատենախոսության դրույթները տեսական առումով կարող են ծառայել բարձրագույն ուսումնական հաստատություններում կոնֆլիկտաբանական և անցումազիտական նոր առարկաների ու դասընթացների մշակման և ուսումնական գործընթացում ներդրման համար:

Գործնական կիրառելիության տեսանկյունից ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծություններն ու առաջարկությունները օգտակար կարող են լինել հասարակական-քաղաքական երկխոսությունների կազմակերպման բովանդակային և ընթացակարգային կողմերի հաշվառման, ՀՀ-ում քաղաքական համակարգի ժողովրդավարացման, իշխանության իրականացման ու հասարակայնության հետ կապերի երկխոսությային ռազմավարությունների ակտիվ ներդրման, ինստիտուցիոնալ բարեփոխումների շարունակման ու դրանց արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության փորձաքննությունը:

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնում: Հետազոտության առանձին դրույթներ ներկայացվել են տարբեր միջազգային գիտական կոնֆերանսների շրջանակներում, մասնավորապես՝ «Քաղաքական գիտությունը արդի քաղաքականության մարտահրավերների առջև. քաղաքագետների համառուսաստանյան VII կոնգրեսում» (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 19-21, 2015թ.) «Կառավարումը XXI դարում» միջազգային գիտագործնական կոնֆերանսում (ՌԴ, ք. Բելգորոդ, հոկտեմբերի 23, 2015թ.), «ԱՊՀ երկրների ժողովուրդների պատմական և մշակութային ընդհանրությունները» միջազգային քաղաքագիտական ֆորումում (Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտ (РИСИ), ՌԴ, ք. Մոսկվա, սեպտեմբերի 6-13, 2015թ.), «Միջսահմանային համագործակցություն. նոր հորիզոններ» (Միջսահմանային համագործակցության և ինտեգրացիայի ինստիտուտ, ՌԴ, ք. Բելգորոդ, սեպտեմբերի 21-25, 2015թ.), «Երկխոսություն հանուն ապագայի» միջազգային գիտակրթական ծրագիր (Ա. Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցման հիմնադրամ (ՌԴ, ք. Մոսկվա, դեկտեմբերի 16-22, 2013թ.), «Ռուսաստանը համաշխարհային ճգնաժամից հետո. նոր մարտահրավերներ, նոր հնարավորություններ» Միջազգային հետազոտությունների ռուսաստանյան ասոցիացիայի VI կոնվենտում (ՌԴ. ք. Մոսկվա, սեպտեմբերի 24-25, 2010թ.): Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի 2 մենագրության, 1 ուսումնական ձեռնարկի և 30-ից ավելի գիտական հոդվածներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կառուցվածքային և բովանդակային առումով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից ու հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 312 էջ է:

Ներածությունում ներկայացվում են թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական մշակվածության աստիճանը, մեթոդաբանությունը, գիտական նորույթները, ատենախոսության տեսական նշանակությունն ու գործնական կիրառելիության հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը հասարակական-քաղաքական դիսկուրսում»** գլուխը բաղկացած է երեք ենթաբաժիններից, որոնցում քննարկվում են քաղաքական երկխոսության հիմնախնդրի ուսումնասիրման տեսական հիմքերն ու զարգացման էվոլյուցիոն օրինաչափությունները անտիկ, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների հասարակական-քաղաքական մտքի համատեքստում:

Առաջին՝ **«Երկխոսության հիմնախնդիրը Անտիկ դարաշրջանի քաղաքական մտքի համարեքստում»** ենթագլխում ուսումնասիրության առարկա են դառնում «երկխոսություն» հասկացության ծագումնաբանության, Անտիկ դարաշրջանի հոգևոր-մշակութային ու հասարակական-քաղաքական ժառանգության մեջ երկխոսության դերի և նշանակության բացահայտման հետ կապված հարցերը: Մասնավորապես, աշխատանքում հիմնավորվում է Անտիկ ժամանակաշրջանից սկսած հասարակության քաղաքական կյանքում երկխոսության հիմնախնդրի դիֆուսիվության բնույթը, ըստ որի երկխոսության էրիստիկական ոճի գերակայությունը, պաթետիզմն ու բանավեճերում հաղթելու մոլուցքը մի կողմից այն վերածում էին քաղաքական աճպարարության պարզ գործիքի, իսկ մյուս կողմից էլ հին հունական հասարակական-քաղաքական միտքը զարգանում էր հենց երկխոսության մտածողության, մտքերի ու տեսակետների շարադրման, դրանց հիմնավորման, մերժման ու փաստարկման երկխոսության տեխնոլոգիաների ակտիվ կիրառման օգնությամբ: Ընդ որում, երկխոսության անտիկ ընկալումը միաժամանակ պարունակում էր շրջակա աշխարհի ճանաչման և՛ իմացաբանական, և՛ գոյաբանական տարրեր՝ որպես մարդկանց շահերի ու պահանջմունքների համաձայնեցման ու համա գոյակցության ապահովման հաղորդակցական ամենաարդյունավետ ու քաղաքակիրթ մեխանիզմ:

Երկրորդ՝ **«Երկխոսության հիմնախնդիրը Միջնադարում. կրոնական էկզիստենցիալիզմի ակունքները»** ենթազխում, քաղաքական երկխոսության հիմնախնդիրը դիտարկելով միջնադարյան հասարակական-քաղաքական դիսկուրսում ցույց է տրվում, որ աշխարհայացքային այն համակարգում, որտեղ ամեն ինչ գործում է աստվածային նախախնամության լույսի ներքո, իսկ քաղաքականության մեջ ընթացող զարգացումները դիտարկվում են որպես աստվածային կամքի արտահայտություն, երկխոսության հիմնախնդիրը չէր կարող լինել նույնքան պահանջված, որքան անտիկ շրջանում էր: Չնայած դրան՝ ատենախոսության մեջ նշվում է, որ աստվածաբանական ուղղության, մասնավորապես՝ կրոնական էկզիստենցիալիզմի շրջանակներում ավելի ուշ շրջանում իրականացվում են երկխոսության հիմնախնդիրին նվիրված ուսումնասիրություններ: Այդ ուղղության ներկայացուցիչներից քննության առնելով Մ. Բուբերի, Ֆ. Ռոզենցվեյգի, Ֆ. Էբների, Լևինասի ու Գ. Ֆրանկի հայացքները՝ բացահայտվում են կրոնական էկզիստենցիալիզմին բնորոշ երկխոսության հարաբերությունների առանձնահատկությունները, որոնք հետագայում տեսական հիմք են դառնում երկխոսության աշխարհիկ հայեցակարգերի ձևավորման համար:

Այդ տրամաբանությունից ելնելով՝ առաջին գլխի երրորդ՝ **«Երկխոսության հիմնախնդրի արդի մեկնաբանությունները էսթետիկ էկզիստենցիալիզմի ու հեգմոնդեոնիստական իրողությունների համադրությամբ»** ենթազխում արդեն քննարկման առարկա են դառնում քաղաքական երկխոսության հիմնախնդրի մեկնաբանման արդի միտումները: Մասնավորապես, երկխոսության հարաբերություններին բնորոշ կարևոր առանձնահատկություններ են բացահայտվում էսթետիկ էկզիստենցիալիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մ. Բախտինի մոտ, ով իր աշխատություններում երկխոսության երևույթը հասցնում է բացարձակության աստիճանի՝ հետևողականորեն զարգացնելով երկխոսության հարաբերությունների գլխավոր սկզբունքը՝ երկխոսության կողմերի՝ միմյանցից բացարձակ անկախությունն ու ազատությունը, միաժամանակ՝ խորքային ներքին միասնությունն ու անբաժանելիությունը:

Իսկ արդեն հետարդյունաբերական ու սպառողական հասարակության գործառության պարագայում, հետմոդեռնիզմի դարաշրջանում, ազգային շարժումների վերածննդի ու կրոնական ինքնության աննախադեպ պոռթկման պայմաններում նկատվում են քաղաքականության սուբյեկտների գործունեության շարժառիթների ու ակտիվության դրսևորման նոր միտումներ, որոնց հիմքում ընկած են սոցիալ-տնտեսական, մշակութային-քաղաքական, քաղաքակրթական

բնույթի բազմաթիվ գործոններ: Դրանք, իրենց հերթին, ազդում են քաղաքական երկխոսության խնդրային դաշտի վրա՝ բացահայտելով ու վերհանելով երկխոսության քաղաքական հաղորդակցության կազմակերպման ու իրականացման վրա ուղղակիորեն ազդող նորանոր խնդիրներ, գործոններ ու օրինաչափություններ: Մասնավորապես, հետմոդեռնիստական իրողությունների համատեքստում դիտարկելով գլոբալ անորոշությունների ու փոխադարձ կախվածության աճի գործոնները՝ հեղինակը նշում է, որ գլոբալ անորոշությունները, ի թիվս քաղաքականության մեջ ռիսկի գործոնի մեծացման, սոցիալական հատվածականության, հասարակական - քաղաքական գործընթացների թատերականացման ու քաղաքականության՝ որպես տեքստային հաղորդակցության համակարգի ընկալման՝ դարձել են ժամանակակից հասարակության էկզիստենցիալ բնույթի կարևոր բնույթագրիչները: Միաժամանակ, գլոբալ անորոշությունների աճն ու փոխկախվածության մեծացումը այն հիմնական նախադրյալներից են, որոնք ստիպում են քաղաքականության և՛ մեզա-, և՛ մակրո-, և՛ միկրոմակարդակներում խթանել համագործակցության երկխոսության կառուցակարգերը: Եթե առաջինը պարունակում է հասարակության հատվածականության մեծացման, մարդու ինքնամեկուսացման ու օտարման տարրեր, ապա երկրորդ գործոնն ավելի շատ օժտված է հասարակության ինտեգրացիայի խորացման, երկխոսության եղանակով համաշխարհային, տարածաշրջանային ու տեղային նշանակության խնդիրների լուծման ներուժով:

Ատենախոսության երկրորդ՝ **«Քաղաքական երկխոսութաբանություն (դիալոգիստիկա). նոր հարացույցի հայեցակարգային ուրվագծերը»** գլխում հետսառըպատերազմյան աշխարհակարգի հիմնական հարացույցերի քննական վերլուծության արդյունքում հիմնավորվում է քաղաքական գիտության բնագավառում նոր հարացույցի՝ քաղաքական երկխոսութաբանության արդիականությունը, ինչպես նաև հստակեցվում են նոր հարացույցի խնդրային ու առարկայական դաշտի հետ կապված հարցերը: Երկրորդ գլխի առաջին՝ **«Հերսառըպատերազմյան (PCW) աշխարհակարգի հիմնական հարացույցերը»** ենթագլխում վերլուծության են ենթարկվում ԽՍՀՄ կազմալուծումից հետո ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրողությունների տեսական իմաստավորման հայեցակարգերը, որոնք առաջ են քաշում Ֆ. Ֆուկույաման և Ս. Հանթինգտոնը: Մասնավորապես՝ եթե Ֆ. Ֆուկույաման սկիզբ է դնում արևմտյան ազատական ժողովրդավարության հարացույցի էյֆորիկ հաղթանակի տեսլականին,

ապա Ս. Հանթինգտոնը «քաղաքակրթությունների բախման» հավակնոտ հարացույցով փորձում է տալ հետսառըպատերազմյան աշխարհակարգի նոր ուրվագիծը, ըստ որի՝ սառը պատերազմի ավարտից հետո մարդկանց միջև առկա առավել կարևոր տարբերությունները ոչ թե գաղափարական, քաղաքական կամ տնտեսական են, այլ կրում են մշակութային կամ քաղաքակրթական բնույթ, ուստի ապագայի գլոբալ, մասշտաբային ու վտանգավոր հակամարտությունները կընթանան ոչ թե սոցիալական դասակարգերի՝ հարուստների ու աղքատների, այլ տարբեր քաղաքակրթությունների պատկանող ժողովուրդների միջև:

Հետևելով գերմանական փիլիսոփայական մտքին բնորոշ պատմության ունիվերսալ ընկալման հեգելյան ավանդույթին, շարունակելով «պատմության ավարտի» կանտյան դիսկուրսը՝ Ֆ. Ֆուկոյաման «պատմության ավարտը» տեսնում է ամբողջ աշխարհում, թեկուզև աստիճանական, ազատական ժողովրդավարության հարացույցի տարածման մեջ: Մեծ հաշվով, ամերիկացի գիտնականը բավական «ջերմետանդությամբ է» խոսում տեխնոժին հասարակության, գիտության առաջընթացի ու պատերազմների «կառուցողական» դերակատարման մասին: Նրա կարծիքով, ոչ թե համագործակցությունը, այլ կոնֆլիկտն է ստիպում մարդկանց միավորվել որոշակի հանրության շրջանակներում հետագայում էլ ավելի կատարելագործելով այդ հանրույթների ներուժը: Այստեղից հեղինակը հետևություն է անում, որ Ֆ. Ֆուկոյամայի առաջ քաշած գաղափարները որոշակի իմաստով պատերազմների արդարացման մայթույան ավանդույթի շարունակությունն են և հենվում են կոնֆլիկտների տեսության մեջ հայտնի «գրոյական գումարով» խաղային ելքերի պրակտիկայի վրա:

Ի հակադրություն Ֆուկոյամայի՝ Ս. Հանթինգտոնը քննադատում է «ներդաշնակ աշխարհի» հարացույցը՝ համարելով այն չափից դուրս կտրված իրականությունից, որպեսզի հետսառըպատերազմյան աշխարհում օգտակար կողմնորոշման հիմք հանդիսանա:

Հեղինակը, ընդհանրացնելով Ս. Հանթինգտոնի առաջ քաշած բազմաքաղաքակրթական հարացույցի ու «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգի հիմնական ուղերձները, արձանագրում է, որ, մեծ հաշվով, ինչպես Ֆ. Ֆուկոյամայի, այնպես էլ Ս. Հանթինգտոնի հայեցակարգերը կառուցված են ամերիկյան հեգեմոնիայի հիմնավորման կամ առնվազն, որքան հնարավոր է, երկարաժամկետ կտրվածքով նրա պահպանման թեզի վրա: Սակայն եթե Ֆուկոյաման պնդում է Արևմուտքի քաղաքակրթության համընդհանրության դրույթը, ապա Ս. Հանթինգտոնն առաջ է քաշում Արևմուտքի յուրօրինակության թեզը՝ գտնելով, որ

քաղաքակրթական զարգացումների ներկա միտումների պայմաններում, լավագույնը, որ կարող է անել ԱՄՆ-ը արևմտյան աշխարհի մյուս պետությունների հետ միասին, սեփական քաղաքակրթական ինքնության ու ինքնատիպության պահպանումն է և ոչ թե դրա արհեստական տարածումը ամբողջ աշխարհով: Ըստ Ս. Հանթինգտոնի՝ Արևմուտքը ոչ թե համընդհանուր (ինչպես կարծում էր Ֆ. Ֆուկույաման), այլ ինքնատիպ քաղաքակրթություն է, որի հիմնական խնդիրը բազմաքաղաքակրթական հարացույցի համաձայն սեփական ինքնության պահպանումն է:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ **«Երկխոսության հարացույցերն ու քաղաքական երկխոսութաբանության արդիականությունը»** ենթագլխում վերլուծության են ենթարկվում երկխոսության հիմնախնդրին նվիրված հարացույցերը՝ խաղաղության հետազոտություններից սկսած մինչև բանակցությունների տեսություն: Հեղինակը պնդում է, որ քաղաքականությունն առանց գիտական լուրջ հիմնավորումների մակերեսային ու ոչ մի տեղ չտանող ուղի է, ու եթե պետությունների իրական քաղաքական նպատակների ու ռազմավարությունների մեջ տեղ է հատկացվում քաղաքական ու քաղաքակրթական երկխոսությանը, ապա այն անպայման պետք է ունենա համապատասխան գիտական աջակցություն: Իհարկե, մեծ հաշվով, ինչպես նշում է հեղինակը, բոլոր ժամանակներում էլ նկատվել է քաղաքական-տեսականի ու քաղաքական-գործնականի ներքին հակադրություն, և ոչ բոլոր դեպքերում է իշխանությունների վարած քաղաքականությունը համապատասխանում տվյալ ժամանակաշրջանի կամ իրավիճակի տեսական իմաստավորումներին: Ուստի պետության քաղաքական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունները հնարավոր է կյանքի կոչել միայն համապատասխան գիտական մշակումների ու հիմնավորումների պարագայում: Այդ իսկ պատճառով, վաղ թե ուշ, պետությունն ու քաղաքականություն իրականացնող հիմնական կենտրոնները ձևավորում են համապատասխան պահանջարկ՝ հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի զարգացման տարբեր ուղիների և ոլորտների գիտականորեն հիմնավորված ռազմավարությունների մշակման համար: Այս տեսանկյունից, թերևս, երկխոսության հիմնախնդրին նվիրված հարացույցերն այսօր հասարակական-քաղաքական դիսկուրսում ամենապահանջվածներից են:

Դիտարկելով երկխոսության հարացույցերը՝ հեղինակն առաջ է քաշում այն թեզը, որ խաղաղության տեսության ու նրա գործնական դրսևորումների միջև առաջանում է որոշակի հարացուցային խզվածք, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում այդ վակուումը

լրացնել նոր հարացույցով, որը կհամատեղի այդ տեսությունների միջև ընկած ինչպես արժեքային (իմացաբանական), այնպես էլ գոյաբանական (ռացիոնալ) բաղադրատարրերը: Նոր հարացույցի հիմնական նպատակը պետք է լինի երկխոսության հիմնախնդրի նորովի վերհանումը, որը մի կողմից կհավասարակշռի երկխոսության արժեքային ընկալումները, մյուս կողմից՝ կլինի բավականաչափ կիրառական, որպեսզի կարողանա լուծել հասարակության առջև ծառայած գլոբալ հիմնախնդիրները: Քաղաքական երկխոսութաբանության խնդրային դաշտը ներկայացնելով՝ առանձնացվում են երեք հիմնական ուղղություններ, որոնք ընդգրկում են երկխոսության գլոբալ (քաղաքակրթական), տարածաշրջանային (ռեգիոնալ) և ներպետական (լոկալ) մակարդակները:

Երկրորդ գլխի երրորդ՝ **«HOMO DIALOGUS»-ը քաղաքական երկխոսութաբանության խնդրային դաշտում**» ենթագլխում հեղինակը հումանիտար գիտությունների բնագավառում նկատվող մարդաբանական շեշտադրումների հաշվառմամբ քաղաքական երկխոսութաբանության հիմնական խնդիր է սահմանում «HOMO DIALOGUS»-ի կերպարի ձևավորումը՝ որպես նոր դարաշրջանի երևույթ: Հեղինակը, վերլուծելով XX և XXI դարի առաջին քառորդում տեղի ունեցող քաղաքական գործընթացները, եզրակացնում է, որ չնայած համաշխարհային տարբեր հարթակներում հնչող երկխոսության կոչերին ու քաղաքական երկխոսութաբանության առարկայական դաշտի ուրվագծմանը, ընդհանուր առմամբ, Homo conflictus-ը դեռ շարունակում է մնալ քաղաքականության մեջ ներգրավված հիմնական դերակատարների գործունեությունն ու վարքագիծը պայմանավորող վճռորոշ գործոն, ինչի արդյունքում էլ ավելի են խորանում հակասությունները համաշխարհային քաղաքականության ու տնտեսության ոլորտում, մրցակցությունը՝ միջպետական ու տարածաշրջանային հարաբերություններում, անհանդուրժողականությունը՝ ներքաղաքական հարաբերությունների հիմնական սուբյեկտների՝ իշխանության ու ընդդիմության միջև փոխհարաբերություններում: Այդ բոլորի հավաքական դրսևորման արդյունքում հասարակության մեջ տիրապետող են դառնում նիհիլիստական տրամադրությունները, ավերման մոլուցքը, ուժի և բռնությամբ հիմնախնդիրների լուծման նախապատվությունը, ինչը կարող է հանգեցնել արդեն մարդկային քաղաքակրթության իքնառջնչացման: Հետևաբար, ըստ հեղինակի, հարկավոր է մտածողության կտրուկ շրջադարձ, մարդկային նոր տեսակի՝ HOMO DIALOGUS-ի դերակատարման ակտիվացում, սոցիալական ու քաղաքական նոր որակի՝ երկխոսության փոխհարաբերությունների հաստատում: Այդ առումով քաղաքական երկխոսութաբանությունը, որը

հավակնում է քաղաքագիտական նոր հարացույցի կարգավիճակին, յուրօրինակ, այսպես կոչված sui generis արձագանք է XX դարի վերջին ու երրորդ հազարամյակի առաջին քառորդում տիրապետող մոտեցումներին:

Ատենախոսության երրորդ՝ **«Քաղաքական հաղորդակցության երկխոսության փեխնուղզիաները»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում քննարկման առարկա են դառնում քաղաքական հաղորդակցության գծային և ոչ գծային մոդելները, բացահայտվում են քաղաքական երկխոսության հաղորդակցության բնորոշ հատկանիշները, դիտարկվում են երկխոսության պրակտիկաների դասակարգման, քաղաքական որոշումների ընդունման երկխոսության տեխնոլոգիաների ու իշխանության իրականացման երկխոսության ռազմավարությունների հետ կապված հարցերը:

Երրորդ գլխի առաջին՝ **«Քաղաքական երկխոսության հաղորդակցության առանձնահատկությունները»** ենթագլխում հեղինակն իրականացնում է քաղաքական հաղորդակցության գծային և ոչ գծային մոդելների համեմատական վերլուծություն՝ ցույց տալով քաղաքական գիտության մեջ հաղորդակցության մենախոսայինից երկխոսային մոդելներին անցման հարացուցային տեղաշարժերը: Մասնավորապես քաղաքական հաղորդակցության գծային մոդելներից ատենախոսությունում քննության են առնվում Ն. Վիների, Կ. Դոյչի, Հ. Լասսուելի, Կ. Շենոնի, Ու. Ուիլերի առաջարկած հայեցակարգերը: Ցույց է տրվում, որ ընդհանուր առմամբ, գծային հաղորդակցության մոդելներն ունեն հստակ ընդգծված միակողմանի ուղղվածություն՝ սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների համակարգով, որի ընթացքում հաղորդակցական շղթայի մասնակիցների միջև ձևավորվում են անհամաչափ փոխհարաբերություններ: Բացի այդ, հաղորդակցության գծային մոդելների մենախոսային բնույթը էպես սահմանափակում է քաղաքական հաղորդակցության արդյունավետությունը, իսկ իշխանության հիերարխիկ ու խիստ ուղղահայաց կառուցակարգի դեպքում առավել հաճախ են կիրառվում հաղորդակցության գծային, մենախոսային մոդելները, որոնք լիովին տեղավորվում են իշխանության հաղորդակցական ռազմավարության նախընտրած տրամաբանության մեջ: Ընդհանուր առմամբ այս մոդելներում թույլ է արտահայտված կամ իսպառ բացակայում է հետադարձ կապի սկզբունքը, որը գործնական կիրառելիության ու արդյունավետ քաղաքական հաղորդակցության հաստատման տեսանկյունից խոցելի է դարձնում հաղորդակցության գծային կառուցակարգը:

Ըստ էության, վերոնշյալ բացը լրացնելուն են ուղղված քաղաքական հաղորդակցության ոչ գծային մոդելները, որոնց տեսական մշակումներն ու քաղաքական պրակտիկայում ակտիվ ներդրման փորձերը սկսվեցին XX դարի 60-ականներից: Բանն այն է, որ մինչ այդ գծային հաղորդակցությանը բնորոշ քաղաքական հաղորդակցման իմպերատիվ-խթանիչ բնույթը լիովին համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրողություններին, երբ զանգվածային հաղորդակցության միջոցներն ու տեխնոլոգիաները նոր էին մուտք գործել հասարակություն, ու մարդիկ այդ փուլում ավելի շատ հանդես էին գալիս տեղեկատվական-հաղորդակցական հոսքերի ակտիվ սպառողների դերում: Սակայն հետագայում հասարակության քաղաքական կյանքում սկսում են կարևոր դեր կատարել քաղաքական հաղորդակցության ինտերակտիվ, երկխոսությանի մոդելները, որոնք շահեկանորեն տարբերվում են գծային, մենախոսային հաղորդակցության կառուցակարգերից: Զարգացնելով քաղաքական հաղորդակցության ոչ գծային դպրոցի ավանդույթները՝ հեղինակն առաջ է քաշում երկխոսության կողմնորոշում ունեցող հասարակայնության հետ կապերի (DOPR) մոդելը՝ որպես քաղաքականության մեջ կոնֆլիկտների կանխարգելմանն ու կարգավորմանն ուղղված PR գործողությունների արդյունավետության բարձրացման կարևոր ռազմավարություն:

Երրորդ գլխի երկրորդ՝ **«Քաղաքական որոշումների ընդունման երկխոսությանի տեխնոլոգիաները»** ենթագլխում ուսումնասիրվում են հասարակության քաղաքական կյանքում տեղ գտած երկխոսությանի պրակտիկաները՝ հաշվի առնելով այն հանագամանքը, որ արդի հասարակական-քաղաքական իրողությունների ու հատկապես՝ տեղեկատվական ու հաղորդակցական հասարակության գործառնության պարագայում երկխոսությանի տեխնոլոգիաների կիրառումը քաղաքականության մեջ ներգրավված սուբյեկտների միջև համատեղ որոշումների նախապատրաստման և/կամ ընդունման գործընթացի կարևոր բաղադրատարրերից են: Այս համատեքստում, ներկայացնելով տարբեր հեղինակների երկխոսությանի պրակտիկաների դասակարգման փորձերը՝ երկխոսության առարկային առնչվող կողմերի փոխադարձ վերաբերմունքի ու հրապարակային արձագանքների առումով հեղինակն առաջ է քաշում **առկախված երկխոսության** տարատեսակը: Առկախված երկխոսությունների պարագայում, եթե ոչ տվյալ պահի երկխոսությանի հաղորդակցության շրջանակներում, ապա այլ համատեքստում ենթադրվում են պատասխան անդրադարձ դերային փոխանակումներ, որոնք այս կամ այն պատճառով չեն հնչում ու մնում են անպատասխան:

Դիտարկելով ՀՀ քաղաքական պրակտիկայում տեղ գտած երկխոսությանին պրակտիկաները՝ հեղինակը նշում է, որ դրանցում առկա են ինչպես թաքնահարույց (կրիպտոերկխոսության), այնպես էլ բովանդակային ձևախեղման (ծաղրախոսության) ու սուբյեկտային անհամապատասխանության (կեղծ երկխոսության) տարրեր, որոնք իրականում քվազիերկխոսությանին պրակտիկաների ու մենախոսային քաղաքական հաղորդակցման քողարկված ձևեր են:

Երրորդ գլխի երրորդ՝ **«Բանակցային երկխոսությունները քաղաքական որոշումների ընդունման համապեքստում»** ենթագլխում հեղինակը քաղաքական երկխոսության տեսակային բազմազանությունից հատկապես անդրադառնում է բանակցությունների միջոցով քաղաքական որոշումների նախապատրաստման և/կամ ընդունման առանձնահատկությունների վերլուծությանը, որպես երկխոսության ավելի «հասուն» վիճակ, մի մակարդակ, որում արդեն երկխոսության կողմերը քաղաքական կամք և ցանկություն են ցուցաբերում, կոնկրետ քայլեր են ձեռնարկում համատեղ գործունեության հիմքով վիճահարույց հարցերի ու հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ: Հեղինակը նշում է, որ հասարակական-քաղաքական կյանքի զարգացման արդի փուլում, մարդկանց կենսագործունեության տարբեր բնագավառներում լայնորեն կիրառվում են բանակցությունները՝ որպես նրանց ամենօրյա փոխհարաբերությունների, վիճահարույց հարցերի, հակամարտությունների կարգավորման, շահերի արտահայտման ու պահանջմունքների բավարարման, միջպետական հարաբերությունների հաստատման և պետությունների միջև համագործակցության ապահովման առավել արդյունավետ ու քաղաքակիրթ եղանակ: Բանակցությունները, հանդիսանալով հասարակության քաղաքական կյանքի կարևոր երևույթներից և քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից մեկը, իրենց առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունեն հատկապես անցումային փուլ ապրող հասարակական-քաղաքական համակարգերում: Հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացներին զուգահեռ, նորանոր մարդիկ, սոցիալական խմբեր, պետական և ոչ պետական հաստատություններ, հասարակական - քաղաքական կազմակերպություններ ու մարդկանց զանազան միավորումներ են ներգրավվում բանակցային գործընթացներին՝ դրանով իսկ առավել հաճախ դիմելով համատեղ որոշումների ընդունման այդ միջոցին: Ատենախոսության շրջանակներում վերլուծության են ենթարկվում ինչպես բանակցային որոշումների

նախապատրաստման, այնպես էլ դրանց ընդունման, բանակցային որոշումների դասակարգման հետ կապված հարցերը:

Երրորդ գլխի չորրորդ՝ **«Իշխանության իրականացման երկխոսությանն ուղղված հարցերը»** ենթագլուխը նվիրված է իշխանության բնույթի բացահայտման, նրա ծագման և մեկնաբանման տեսությունների պատմական էվոլյուցիայի համատեքստում նկատվող հարացուցային (պարադիգմալ) տեղաշարժերին, որոնք տեղի են ունենում քաղաքական գիտության շրջանակներում: Հեղինակը նշում է, որ այդ տեսությունների համատեքստում բավարար չէ իշխանության երևույթը բացատրել միայն պարզ տիրապետության և ենթակայության հարաբերությունների տեսքով, հրաման-ենթարկում կառուցակարգով, կամ էլ դիմադրության տեսության դիրքերից: Իշխանության իրականացման գործընթացն իրականում ավելի բարդ սոցիալական հարաբերություններ է ենթադրում, որը պահանջում է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև առնվազն նվազագույն համաձայնություն, օբյեկտի կողմից սուբյեկտի իշխելու իրավունքի ընդունում: Այս համատեքստում որոշակիորեն փոխվում է նաև իշխանության իրականացման ողջ փիլիսոփայությունը, որտեղ արդեն իշխանության «երկխոսության» հարացույց ձևակերպումը կարող է այնքան էլ «խորթ» չթվալ, դեռ ավելին՝ որոշակիորեն հավակնել գոյության իրավունքի: Ընդ որում, իշխանության մեկնաբանման և՛ համակարգային, և՛ վարքաբանական, և՛ ռեյացիոն հայեցակարգերում կան տեսություններ, որոնք իրենց շարադրման տրամաբանությամբ մոտ են «երկխոսության» հարացույցին: Ատենախոսության շրջանակներում դիտարկելով «փափուկ ուժի» հայեցակարգի արտաքին ու ներքաղաքական դրսևորումները՝ հեղինակն այն դատում է իշխանության իրականացման երկխոսությանն ուղղված հարցերի շարքին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իշխանությունն իր առջև դրված նպատակներին հասնելու համար ընտրում է բացառապես խաղաղ միջոցներ: Բացի այդ «փափուկ ուժի» հայեցակարգը ենթադրում է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև որոշակի համաձայնություն, կոնսենսուս, ինչն ավելի շուտ հնարավոր է հաստատել հենց քաղաքական հաղորդակցության երկխոսության տեխնոլոգիաների միջոցով: Ինչպես նաև, ապահովելով որոշակի գաղափարների, ինչու չէ, նաև մշակույթների միջև մրցակցություն՝ «փափուկ ուժի» հայեցակարգը թույլ է տալիս ինչպես միջպետական հարաբերությունների, այնպես էլ ներքաղաքական հաղորդակցման սուբյեկտներին ընտրել իրենց շահերին համապատասխանող լավագույն գաղափարներն ու մտքերը: Ու վերջապես, «փափուկ ուժի» ուղղվածությունը կիրառողի արժեքային «էքսպանսիան» պարտադրված

և ստիպողական չէ, այլ ավելի շատ կրում է կամավորության բնույթ, ինչն իր հերթին, իշխանության գործողությունների լեգիտիմացման ավելի մեծ ներուժ է պարունակում: Հատկապես ներքաղաքական հարաբերություններում, հեղինակի կարծիքով, անցումը իշխանության իրականացման «փափուկ» ռազմավարություններին, մենախոսային քաղաքական հաղորդակցության կառուցակարգերի փոխարեն երկխոսությանին տեխնոլոգիաների լայն կիրառումը մեծապես կարող է ազդել ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների արագության, որակի ու արդյունավետության վրա:

Ատենախոսության չորրորդ՝ **«Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդավարության անցման համադրբարում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ քննարկվում են ժողովրդավարության անցման և համախմբման գործընթացում քաղաքական երկխոսության դերակատարման հետ կապված հարցերը: Մասնավորապես, չորրորդ գլխի առաջին՝ **«Ժողովրդավարության երկխոսությանին անցման առանձնահատկությունները»** ենթագլխում ժողովրդավարության «երրորդ ալիքի» համատեքստում վերլուծության են ենթարկվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ժողովրդավարության երկխոսությանին անցման փորձը, այդ գործընթացի հիմնական գործոններն ու օրինաչափությունները: Մասնավորապես, հետևելով ժողովրդավարության «երրորդ ալիքի» հանթինգտոնյան մեկնաբանությանը, հեղինակը նշում է, որ առավել հաճախ ժողովրդավարական անցումները, հատկապես երրորդ ալիքի համատեքստում բացահայտ բանակցությունների կամ թաքնահարույց (լատենտ) համաձայնությունների արդյունք էին, ընդ որում՝ բանակցությունների նախաձեռնությամբ հանդես էին գալիս և՛ «վերևները», և՛ «ներքևները»՝ փորձելով համատեղ մշակել ժողովրդավարական անցման երկուստեք ընդունելի պայմաններ ու ժողովրդավարական խաղի նոր կանոններ: Ժողովրդավարության «երրորդ ալիքի» համատեքստում դիտարկելով Իսպանիայի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից (ԿԱԵ) Լեհաստանի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի ժողովրդավարության անցման փորձը, հեղինակը դրանք երկխոսությանին է համարում, քանի որ դիտարկվող բոլոր դեպքերում ժողովրդավարական բարեփոխումների սահուն ու անցնցում ընթացքը մեծապես պայմանավորված է եղել իշխանություն-ընդդիմություն քաղաքական երկխոսությանը և «կլոր սեղանների» ռազմավարությանը նախապատվություն տալով: Ընդ որում, քաղաքական երկխոսության միջոցով այդ երկրներում լուծում ստացան ոչ միայն քաղաքական, այլև

սոցիալ-տնտեսական նշանակության հարցեր: ԿԱԵ երկրների ժողովրդավարության անցման գործում մեծ ազդեցություն ունեցան նաև կազմակերպված ու անկախ գործող արհմիությունները, որպես քաղաքական երկխոսության առանձին սուբյեկտ, որոնք բացակայությունը, կամ առնվազն ֆորմալ գոյությունը հակառակ էֆեկտ թողեց արդեն հետխորհրդային փոխակերպումների համատեքստում: Մյուս կողմից, ըստ հեղինակի, քաղաքական գործընթացների բոլոր մասնակիցների կողմից երկխոսության ռազմավարության գիտակցումը պետք է համարել ոչ թե ի վերուստ տրված իրողություն, այլ երկարատև պայքարի արդյունք, քանի որ և՛ Իսպանիայի, և՛ Լեհաստանի, և՛ Հունգարիայի ու Չեխոսլովակիայի պարագայում «Մեծ քաղաքական երկխոսություններին» նախորդել էին բռնություններով, հարյուրավոր մարդկային զոհերով ուղեկցված քաղաքական գործընթացներ, որոնք տասնյակ տարիներով արգելափակել էին ժողովրդավարական բարեփոխումներն այդ երկրներում: Այստեղից հեղինակը եզրակացնում է, որ քաղաքական երկխոսության ճանապարհն ավելի հաճախ ընտրում են այն երկրները, որոնք իշխանություն-ընդդիմություն արմատական առճակատման դառը փորձ են ունեցել: Բացի այդ, քաղաքական երկխոսության ճանապարհով ժողովրդավարական բարեփոխումների իրականացումը հնարավոր է դառնում երկուստեք ավելի չափավոր քաղաքական կուրս որդեգրելու դեպքում, որը թուլացնում է ծայրահեղականության դրսևորումներն ու ոչ ժողովրդավարական մեթոդներով իշխանության համար պայքարի հավանականությունը: Դիտարկելով հետխորհրդային տարածքում ժողովրդավարության անցման գործընթացները՝ հեղինակը նշում է, որ եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների պարագայում ժողովրդավարության անցումը կարելի է համարել կայացած փաստ, ապա նախկին Խորհրդային Միության երկրների առնվազն կեսի պարագայում այդ անցումը ընդհանրապես տեղի չի ունեցել կամ արգելափակվել է վաղ շրջանում, իսկ ևս հինգի՝ այդ թվում և Հայաստանի պարագայում ժողովրդավարության անցումը դեռ շարունակվում է:

Ատենախոսության չորրորդ գլխի երկրորդ՝ **«Երկխոսության պրակտիկաները ժողովրդավարության համախմբման համարեքստում»** ենթագլխում արդեն քննարկվում են ժողովրդավարության համախմբման համատեքստում երկխոսության պրակտիկաների ազդեցության հետ կապված հարցերը: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ եթե ժողովրդավարության անցման առաջին փուլում հնարավոր են ինչպես կոնֆլիկտային, այնպես էլ երկխոսության անցումներ, ապա ժողովրդավարության ինստիտուցիոնալ համախմբումը

հնարավոր է բացառապես երկխոսության շրջանակում, քաղաքական ինստիտուտների կառուցվածքի շուրջ հիմնական քաղաքական ուժերի միջև համաձայնության կամ լրջության պարագայում: Ժողովրդավարության համախմբումը դիտարկելով որպես երկրորդ անցում հեղինակը քննարկում է այդ գործընթացի վրա ազդող համատեքստային, վարքագծային և ինստիտուցիոնալ գործոնները: Վերոնշյալ տարբերակները դիտարկելով՝ հեղինակը նշում է, որ ժողովրդավարության համախմբման համատեքստում ինստիտուցիոնալ կայունության կարելի է և պետք է հասնել բացառապես քաղաքական երկխոսության և պակտային համաձայնությունների միջոցով: Հենց քաղաքական պակտերի ընդունման ճանապարհով է հնարավոր հասնել քաղաքական հիմնական ուժերի համար ընդունելի ժողովրդավարական խաղի կանոնների շուրջ համաձայնությունների և ապահովել ժողովրդավարական ինստիտուտների երկարաժամկետ գոյությունը:

Պակտային համաձայնությունները հատկապես կարևոր են նաև իշխանություն-ընդդիմություն քաղաքակիրթ փոխհարաբերությունների հաստատման տեսանկյունից, քանի որ ժողովրդավարության համախմբման դեպքում նույնքան արդիական է այն հարցը, թե որքան ընդդիմադիր պետք է լինի ընդդիմությունը իշխանության նկատմամբ: Եթե ընդդիմությունը չի ներկայացնում քաղաքական զարգացման լուրջ այլընտրանքներ, չի դիմադրում ռեժիմին, ապա այդ դեպքում, վտանգը մեծ է, որ թույլ կգտնվեն նաև հասարակության համախմբման ինստիտուցիոնալ ռեսուրսները: Մյուս կողմից էլ, եթե ընդդիմությունը չափից դուրս կոչտ և անհանդուրժողական վարքագիծ է որդեգրում, սա էլ, իր հերթին կարող է խաթարել ժողովրդավարական ինստիտուտների գոյությունն ընդհանրապես: Իհարկե, չափավոր քաղաքականությունն ու պակտային համաձայնությունները ժողովրդավարության համախմբման համար իդեալական նախապայմաններ են, ուղղակի այդ դեպքում, ըստ հեղինակի, ծագում է այլ խնդիր. իշխանությունը կարող է քաղաքական կյանքը մոդելավորել «խաղ մեկ դարպասի» ուղղությամբ, երբ կառավարող հիմնական քաղաքական ուժը մնում է մրցակցությունից դուրս, իսկ քաղաքական պայքարի իմիտացիան տեղի է ունենում ընդդիմադիր դաշտում՝ հիմնական ընդդիմության «տիտղոսի» համար: Սա, իր հերթին, կարող է «սողացող ժողովրդավարության» էֆեկտ ստեղծել, որի դեպքում այդպես էլ քաղաքական համակարգը չհաղթահարի «երկու ռոտացիաների», այսինքն ընտրությունների միջոցով առնվազն երկու անգամ անընդմեջ իշխանության խաղաղ փոխանցման թեստը: Իսկ եթե դա տեղի չի ունենում, ապա, բնականաբար, ժողովրդավարությունը

այդպես էլ իր համախմբման փուլին չի հասնում՝ հետընթաց արձանագրելով ու համարելով ավտորիտար քաղաքական վարչակարգի տարբեր մոդիֆիկացիաների մեծ բանակը:

Խոսելով պակտային համաձայնությունների առավելության մասին, հեղինակը նշում է, որ դրանց միջոցով ժողովրդավարության համախմբման պարագայում ավելի հեշտ է պահպանել թեկուզ նախասաղմնային վիճակում գտնվող ժողովրդավարական ինստիտուտները, թուլացնել քաղաքական առճակատումների վտանգը, հիմնական մրցակցող քաղաքական ուժերին բերել այդ պահին բոլորի համար ընդունելի միասնական խաղի կանոնների դաշտ:

Չորրորդ գլխի երրորդ՝ **«Երկխոսության մշակույթը ժողովրդավարության համախմբման գործընթացում»** ենթագլխում հեղինակը ժողովրդավարության համախմբման գործընթացի արդյունավետության և ռեդուկցիայի վրա անմիջականորեն առնչություն ունեցող փոփոխականների (պարամետրերի) շարքում առանձնացնում է մշակույթային գործոնների կարևորությունն ու առանցքային դերակատարումը ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման և կայունացման գործում: Այդ համատեքստում քաղաքական երկխոսության մշակույթը դիտարկվում է որպես ժողովրդավարության համախմբման կարևոր նախադրյալ:

Հեղինակը քաղաքական գործընթացները՝ մասնավորապես ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը դիտարկելու և երկխոսության մշակույթի միջև եղած կապերը բացահայտելու համար կիրառում է էթնոչափագիտական մեթոդաբանությունը, որի օգնությամբ բացահայտվում են ժողովրդավարության երրորդ ալիքի երկրների անցման մի շարք օրինաչափություններ: Հենվելով հոլանդացի գիտնական Գ. Հոֆսթեդի էթնոչափագիտական մեթոդաբանության մի քանի չափորոշիչ-ինդիկատորների վրա, ինչպիսիք են իշխանությունից հեռավորությունը (PDI- Power Distance Index), անորոշությունները խուսափումը (UAI- Uncertainty Avoidance Index), անհատապաշտությունը (IDV-Individualism) և առնականությունը (MAS-Masculinity), հեղինակն առաջ է քաշում մի շարք թեզեր: Մասնավորապես, իշխանությունից չափից մեծ հեռավորությունը (PDI) դանդաղեցնում է ժողովրդավարության համախմբման գործընթացն ու չի նպաստում երկխոսության պրակտիկաների ձևավորմանը: Քաղաքական երկխոսության ճանապարհով «ժողովրդավարության երրորդ ալիքն» անցած ու ժողովրդավարության համախմբումն ավարտած երկրների պարագայում նկատվում են իշխանությունից հեռավորության(PDI) միջին ցուցանիշներ (45-75): Սա, իր հերթին

ենթադրում է քաղաքականության սուբյեկտների միջև «երկխոսության» ձգողականության» առկայություն, որը թույլ է տալիս քաղաքական երկխոսության հիմնական կողմերին՝ իշխանությանն ու հասարակության ընդդիմադիր տրամադրված քաղաքական ուժերին և սոցիալական խմբերին չհեռանալ իրարից, չայրել կամուրջները, ցուցաբերել որոշակի քաղաքական կամք, ձգտում հասարակության մեջ կուտակված խնդիրները, այդ թվում և իշխանության ու ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը մեղմացնել հենց քաղաքական երկխոսությունը ինստիտուցիոնալ հիմքի վրա դնելու ու երկխոսության մշակույթ ձևավորելու ճանապարհով: Հաջորդ թեզը վերաբերում է առնականության (MAS) դասիչի ազդեցությանը, ըստ որի երկխոսության մշակույթի ձևավորման տեսանկյունից առնականության բարձր ցուցանիշները կարող են լուրջ խոչընդոտներ հարուցել հասարակական-քաղաքական հիմնախնդիրները խաղաղ կարգավորման հունով ուղղորդելու համար, իսկ ցածրի դեպքում, ընդհակառակը, քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման ու արմատավորման համար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում: Հոֆսթեյան մեթոդաբանության հաջորդ՝ անորոշություններից խուսափման (UAI) դասիչի կապակցությամբ հեղինակը եզրակացնում է, որ այն հասարակություններում, որտեղ դեռ ժողովրդավարական խաղի կանոնները վերջնականապես չեն հաստատվել ու կան բազմաթիվ ինստիտուցիոնալ անորոշություններ հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ինստիտուցիոնալ-սահմանադրական դիզայնի շուրջ, հասարակական-քաղաքական «Մեծ երկխոսության» ճանապարհով խաղի կանոնների որոշակիացումն ու հստակեցումը տվյալ հասարակության քաղաքական դիսկուրսում առավել պահանջված հիմնախնդիրներից են հանդիսանում: Այդ իսկ պատճառով էլ, երկխոսության մշակույթը պահանջված կարող է լինել անորոշություններից խուսափման(UAI) բարձր գործակից ունեցող երկրներում:

Անհատապաշտության ցուցանիշի (IDV) ազդեցության առումով հեղինակը նշում է, որ այդ գործակիցը երկխոսության մշակույթի վրա երկակի ազդեցություն կարող է ունենալ՝ մի դեպքում խթանելով անհատական ուղիղ երկխոսության պրակտիկաները, իսկ մյուս դեպքում՝ խմբային անուղղակի դիսկուրս-երկխոսությունները, որտեղ առաջնային է դառնում ենթատեքստային հաղորդակցությունը:

Առենախոսության հինգերորդ՝ **«Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական բարեփոխումների համարեքսպում»** գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որտեղ քննարկվում են ՀՀ քաղաքական համակարգի

կայացման, ժողովրդավարական բարեփոխումների գործում երկխոսության պրակտիկաների ինստիտուցիոնալացման ու քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման հիմնախնդիրները: Հեղինակը նշում է, որ ժողովրդավարության համախմբման փուլում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կայացման, ինստիտուցիոնալ բարեփոխումներն իրենց տրամաբանական ավարտին հասցնելու տեսանկյունից խիստ արդիական են դառնում քաղաքական երկխոսության կառուցակարգերի ներմուծումը, դրանց ինստիտուցիոնալ ամրագրումն ու հայաստանյան հասարակության քաղաքական գիտակցության մեջ երկխոսության մշակույթի ձևավորումը՝ որպես համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական: Այդ առումով հինգերորդ գլխի առաջին՝ **«Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրը ՀՀ-ում»** ենթագլխում դիտարկվում են ՀՀ անկախացումից ի վեր հասարակության քաղաքական կյանքում տեղ գտած քաղաքական հակամարտությունների ու այդ համատեքստում՝ քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման խնդիրները: Ընդ որում, հիմնահարցն ուսումնասիրվում է լայն ու նեղ առումներով. լայն առումով՝ քաղաքական ինստիտուցիոնալացման, իսկ նեղ առումով՝ քաղաքական հակամարտությունների ինստիտուցիոնալացման համատեքստում, որը թույլ է տալիս պետության և հասարակության ներսում ծագած հակամարտություններն ու վիճահարույց հարցերն ուղղորդել դեպի ինստիտուցիոնալ հարթակներ, մեղմել դրանց բացասական ներուժն ու հակամարտությունների կարգավորման գործընթացները տանել խաղաղ կարգավորման ճանապարհով:

ՀՀ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում ատենախոսությունում հեղինակը դիտարկում է սահմանադրական բարեփոխումների գործընթացի ներծին (էնդոգեն) և արտածին (էկզոգեն) գործոնները, վերհանում երկրի ինստիտուցիոնալ-սահմանադրական դիզայնի հետ կապված քաղաքական դիսկուրսի հիմնական օրակարգային հարցերը: Մասնավորապես, ատենախոսությունում ցույց է տրվում, որ ՀՀ նախկին Սահմանադրության գործառնության շուրջ 20 տարիների ընթացքում այդպես էլ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական բարեփոխումների ու ժողովրդավարության համախմբման տեսանկյունից երկու կարևոր ցուցանիշ՝ «ռոտացիոն» ու «համագոյակցության» թեստերը չհանձնվեցին, ու այդպես էլ ընտրությունների միջոցով (բացի 1990-1991թթ. հիմնադիր ընտրությունները) մենք իշխանափոխության ականատես չեղանք, ինչպես նաև չունեցանք այնպիսի քաղաքական իրավիճակ, երբ նախագահը

գրկված կլիներ խորհրդարանական մեծամասնությունից, ու իշխանության այդ երկու բարձրագույն թևերը ստիպված կլինեին «համագոյակցեք»՝ ներկայացնելով տարբեր քաղաքական ուժեր: Սահմանադրական ու ներքաղաքական կայունության տեսանկյունից երկու թեստերի հաղթահարումն էլ իսկապես շատ կարևոր էր: Հետևաբար, ինչպես քաղաքական ինստիտուտների միջև հնարավոր առճակատումներից խուսափելու, այնպես էլ քաղաքական հակամարտությունների և երկխոսությունների ինստիտուցիոնալացման տեսանկյունից պետք է փաստել, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության նոր տարբերակը մի կողմից հանում է իշխանության ճյուղերի միջև հավանական հակամարտությունն ու լարվածությունը, իսկ մյուս կողմից՝ նախատեսում քաղաքական կոնֆլիկտների ինստիտուցիոնալացման ու երկխոսության հաստատման նոր հարթակներ:

Անցում կատարելով քաղաքական հակամարտությունների ինստիտուցիոնալացման ձևերին՝ հեղինակը նախ քննարկում է իրավական նորմերի և ընթացակարգերի շրջանակներում վիճահարույց հարցերի լուծման եղանակները: Հայաստանյան քաղաքական պրակտիկայի համատեքստում քաղաքական կոնֆլիկտների իրավական կարգավորման տարբերակները քննարկելիս՝ հեղինակը մատնանշում է դրանց ցածր արդյունավետությունը: Ընդ որում, հայաստանյան փորձը վկայում է, որ ՀՀ-ում տեղի ունեցած բոլոր նախագահական և խորհրդարանական ընտրություններում (բացառությամբ 1998թ.) առնվազն 10 անգամ նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքները վիճարկվել են ՍԴ-ում և բոլոր դեպքերում էլ ՍԴ-ն մերժել է դիմող կողմի պահանջը: Հետևաբար հարց է առաջանում, թե որքանով է այդ ինստիտուտը նպատակահարմար ու արդյունավետ հասարակության քաղաքական համակարգում ծագած կոնֆլիկտների արդարացի լուծման տեսանկյունից: Ահա սա է խնդիրներից մեկը, որ անհրաժեշտություն է առաջացնում իրավական մեխանիզմներին զուգահեռ կայացնել ու ամրապնդել քաղաքական կոնֆլիկտների ինստիտուցիոնալացման ու կարգավորման ոչ իրավական մեխանիզմները, որն արդեն ենթադրում է երկխոսության հարթակների ստեղծում ու իշխանություն-ընդդիմություն բանակցությունների վարման ընթացակարգային ապահովում:

Հինգերորդ գլխի երկրորդ՝ **«Քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում»** ենթազխում վերլուծությունը կառուցվում է էթնոչափագիտական մեթոդաբանության հաշվառմամբ: Մասնավորապես, ատենախոսությունում ցույց է տրվում, որ հայաստանյան հասարակական-քաղաքական կյանքին, ընդհանուր

առմամբ, բնորոշ են իշխանությունից հեռավորության բարձր ցուցիչ (PDI) ունեցող երկրներին հատուկ ախտանիշները: Առաջին հերթին՝ սոցիալական-քաղաքական օտարվածության ու անոմիայի բարձր աստիճանը, որը դրսևորվում է զանգվածային արտագաղթի, անտարբերության, ապատիայի, համընդհանուր հիասթափության, վստահության ճգնաժամի ու ձևավորված «գաղջ» մթնոլորտի տեսքով: ՀՀ-ում իշխանությունից հեռավորության ցուցիչի (PDI) իջեցման նպատակով հեղինակն առաջարկում է վերանայել իշխանության իրականացման ավանդական՝ մենախոսային ռազմավարությունն ու միակողմանի՝ հեռարձակման քաղաքական հաղորդակցումից անցում կատարել երկխոսությանին հաղորդակցման պրակտիկային: Դրան զուգահեռ, հրապարակային քաղաքականության ու իշխանական որոշումների ընդունման գործընթացում առավել հաճախ կիրառել հասարակայնության հետ կապերի երկխոսության կողմնորոշում ունեցող (DOPR - Dialogue Oriented Public Relations) տեխնոլոգիաները: Իշխանության կողմից նման քաղաքականության որդեգրումն, իր հերթին, կարող է նպաստել հասարակական գիտակցության մակարդակում որոշակի դրական տեղաշարժերին, իշխանություն - հասարակություն, իշխանություն - ընդդիմություն երկխոսությանին պրակտիկաների հաճախականության ավելացմանը: Հետևաբար, մեր հանրապետությունում օրվա հրամայական է իշխանությունից հեռավորության (PDI) հասարակական ընկալումների մեղմացումը, քաղաքականության մեջ և որոշումների ընդունման գործընթացում խորհրդակցական (դելիբերատիվ) ժողովրդավարության ընթացակարգերի ներմուծումը:

Հեղինակը նշում է, որ հայաստանյան քաղաքական մշակույթին, ընդհանուր առմամբ, բնորոշ է «առնականության» (MAS) բարձր աստիճան, որն ունի ոչ միայն քաղաքական, այլ նաև սոցիալական խոր համատեքստ: Ըստ հեղինակի՝ հասարակական-քաղաքական հարաբերություններում «առնականության» բարձր աստիճանը պետք է իջեցվի, նախևառաջ, լայնածավալ տեղեկատվական իրազեկման, համապատասխան աջակցության ու կրթական ծրագրերի ներմուծման միջոցով, որոնք հայ հասարակության արժեքային ընկալումների մակարդակում կարմատավորեն ինչպես սեռերի հավասարության, այնպես էլ փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, խաղաղության ու երկխոսության արժեքները: Բացի իշխանության և ընդդիմության քաղաքական կամքից, այդ գործում մեծ դերակատարում է վերապահված նաև ՋԼՄ-ներին, որոնք նույնպես կամա թե ակամա դառնում են «առնականության» մշակույթի տարածողներ: Այն քաղաքական բառապաշարը, սերիալային

դյուցազներգությունը (Էպոպեա), տեղեկատվական հոսքերն ու վերլուծական հոդվածները, որոնք տեղ են գտնում հայկական հեռուստաթերթում, տպագիր և էլեկտրոնային մամուլի էջերում, հեռաբժակում են ազդեսփյուլթյուն, բռնություն, ատելություն և անհանդուրժողականություն, որոնք ամենևին չեն նպաստում երկխոսության մշակույթի ձևավորմանը:

«Անորոշություններից խուսափման» (UAI) առնչությամբ հեղինակը նշում է, որ այս դասիչի գործառնության հարցում նկատվում է հայեցակարգային երկվություն (դիխոտոմիա), ըստ որի վերջին տարիների հայաստանյան քաղաքական զարգացումների ընթացքը լիովին տեղավորվում է հետմոդեռնիստական իրողությունների տրամաբանության մեջ: Քաղաքական և սոցիալական անորոշությունները, տարաբնույթ ճգնաժամերն ու անկանխատեսելի իրավիճակները դառնում են արդի հայ հասարակության էկզիստենցիալ բնութագրիչները, որտեղ, մի կողմից՝ տեղի է ունենում քաղաքականության թատերականացման գործընթաց՝ ի դեմս կեղծ երկխոսության պրակտիկաների, իսկ մյուս կողմից՝ պետական ամենաբարձր մակարդակով բարձրաձայնվում է հայ հասարակության, պետականության առջև ծառայած մարտահրավերն ու խնդիրները համատեղ քննարկումների, քաղաքական երկխոսության ճանապարհով լուծելու քաղաքական կամքի ու ցանկության մասին:

Ըստ հեղինակի՝ հայեցակարգային երկվություն է նկատվում նաև հայաստանյան քաղաքական մշակույթում անհատապաշտություն VS կոլեկտիվիզմ (IDV) դասիչի տվյալների դիտարկման ժամանակ: Վիճարկելով անհատապաշտությանը ձգտող հայաստանյան բանակցային-երկխոսության մշակույթի թեզը՝ հեղինակը նշում է, որ Հայաստանում հետխորհրդային անցման համատեքստում ձևավորված քաղաքական մշակույթը ու դրանից բխող ենթամշակութային շերտը շատ լուրջ վերապահումով կարելի է ազատական, անհատապաշտական համարել: Զարգացնելով հայ քաղաքագետներից Ա.Ենգոյանի առաջ քաշած հասարակության առաջնային բջիջ համարվող ընտանիքի ու նրա հետ կապված ցեղի «կոլեկտիվ անհատապաշտության» թեզը՝ հեղինակը նշում է, որ եթե պետականության բացակայության պայմաններում ընտանիքի՝ որպես բարձրագույն արժեքի ու դրանից ածանցված ազգակցական-արյունակցական կապերի շուրջ «կոլեկտիվ անհատապաշտության» մոդելի ձևավորումն անժխտելիորեն ունեցել է իր ազգապահպան մեծ առաքելությունը, ապա անկախ պետականության գործառնության պարագայում ընտանեկան շահերի գերակայությունն ու դրանց պրիզմայի ներքո քաղաքականության իրագործումն իր մեջ իրական ու պոտենցիալ

լուրջ վտանգներ է պարունակում: Նման արժեքային ու աշխարհայացքային կողմնորոշման դեպքում պետության վարած քաղաքականությունն էլ կամ թե ակամա հայտնվում է «ընտանեկան-կլանային» շահերի ազդեցության տիրույթում, երբ հանրային, քաղաքական ու պետական շահերը ստորադասվում են նեղ անձնային-ընտանեկան շահերին, երբ պետական իշխանության ձևավորման, կադրային նշանակումներում ու քաղաքական սերնդափոխության գործում եթե ոչ դե յուրե, ապա դե ֆակտո բախվում ենք ժառանգականության ֆեոդոնենին, հայրերից որդիներին իշխանության փոխանցման տարաբնույթ դրսևորումներին: Ժողովրդավարության համախմբման տեսանկյունից սրանք լուրջ մարտահրավերներ են, որոնք պետք է հաղթահարվեն հայ հասարակությունում: Այս առումով, ըստ հեղինակի, ընտանեկան-կլանային շահի գերաթևորումից, որն ինչ-որ չափով բնորոշ է ավանդական հասարակություններին ու արևելյան մշակույթին, ժամանակակից հայ հասարակության քաղաքական գիտակցության մեջ ու մշակույթային ենթաշերտում պետք է տեղի ունենան հիմնարար տեղաշարժեր դեպի սոցիալական, հանրային կողմնորոշում ունեցող շահերի ձևավորման ու սպասարկման ուղղությամբ: Նման տեղաշարժերն, իրենց հերթին, թույլ կտան զերծ պահել պետության վարած քաղաքականությունը նմանատիպ ոչ ցանկալի միջամտություններից, թուլացնել ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական խիստ բևեռացվածությունը, բացել քաղաքական համակարգը, քաղաքական ընտրանու հավաքագրման փակ-սելեկտիվ մոդելից անցում կատարել բաց-անթերսպրեներական մոդելին, մարդ-կուսակցությունների կամ բիզնես խմբավորումների փոխարեն ունենալ դասական՝ գաղափարական ու սոցիալ-քաղաքական շահերի սպասարկմանը միտված կուսակցություններ, վայրի կապիտալիզմին բնորոշ տնտեսական հարաբերություններից շուտափույթ անցում կատարել դեպի սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական հարաբերությունների մոդելին, սերունդների համերաշխությունն ու սոցիալական գործընկերությունը հռչակելով որպես պետության սոցիալական քաղաքականության առաջնահերթություններ:

Ըստ ատենախոսության գլուխների՝ **Եզրակացությունում** ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, տեսական ու գործնական նշանակություն ունեցող եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնցից, մասնավորապես, առանձնացվում են հետևյալները.

- հասարակական-քաղաքական դիսկուրսում երկխոսության հիմնախնդրի հետ կապված նկատելի է հայեցակարգային որոշակի դիֆուստոմիա, ինչն օրինաչափորեն դրսևորվում է մարդկային հասարակության պատմական զարգացման ողջ ընթացքում:

- Արդի հասարակական-քաղաքական դիսկուրսում երկխոսության հիմնախնդրին նվիրված ուսումնասիրությունները յուրօրինակ վերաձևունդ են ապրում՝ հիմք հանդիսանալով երկխոսության նոր հարացույցերի ձևավորման համար:
- Մասնավորապես, հումանիտար գիտելիքի բնագավառում, քաղաքական գիտության համակարգում նման նոր հարացույցի հայտ է ներկայացնում քաղաքական երկխոսութաբանությունը, քանի որ արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում ոչ միայն քաղաքական, այլև ունիվերսալ երկխոսության երևույթի դերի նորովի արժևորման ու գիտական խոր վերլուծությունների խիստ կարիք է զգացվում, որն ընդգրկում է ինչպես մարդու ու բնության միջև նոր երկխոսությունը, այնպես էլ ժամանակակից հասարակության երկխոսության գոյաբանությունը:
- Երկխոսության երևույթի նման ընկալումն ամբողջությամբ փոխում է հասարակական-քաղաքական հարաբերությունների ողջ իմաստը՝ իշխանության իրականացման գործընթացը դիտարկելով երկխոսության կառուցակարգերի ինտենսիվ կիրառման պրիզմայի ներքո՝ պարարտ հող նախապատրաստելով HOMO DIALOGUS-ի իմացաբանական ու գոյաբանական շերտերի բացահայտման համար:
- Հասարակության քաղաքական կյանքում կիրառվող երկխոսության պրակտիկաների դասակարգման համատեքստում առաձևանում է առկախված երկխոսության տարատեսակը, որը ենթադրում է երկխոսության առարկային առնչվող կողմերի փոխադարձ վերաբերմունք և հնարավոր հրապարակային արձագանք:
- Ըստ էության, առկախված երկխոսությունների պարագայում, եթե ոչ տվյալ պահի երկխոսության հաղորդակցության շրջանակներում, ապա այլ համատեքստում ենթադրվում են պատասխան անդրադարձ դերային փոխանակումներ, որոնք այս կամ այն պատճառով այդպես էլ չեն հնչում ու մնում են անպատասխան:
- ՀՀ Սահմանադրության փոփոխության գործընթացը որոշակիորեն տեղավորվում է անցման հարացույցի ու ժողովրդավարական բարեփոխումների շարունակման տրամաբանության մեջ, քանի որ ՀՀ սահմանադրական շինարարության փորձը վկայում է, որ նախորդ սահմանադրությունների գործառնության պայմաններում ժողովրդավարության համախմբման երկու կարևոր՝ ռոտացիոն և համագոյակցության թեստերը այդպես էլ չհանձնվեցին, իսկ կառավարման կիսանախագահական համակարգն ու ուժեղ նախագահության ինստիտուտի տիրապետման շուրջ ծավալված

քաղաքական պայքարը առավել թեժ հակամարտությունների պատճառ հանդիսացան:

- Այդ հակամարտությունների իրավական-սահմանադրական կարգավորման փորձերը նույնպես որոշակիորեն ձախողվեցին, որոնք էլ, իրենց հերթին, անհրաժեշտություն առաջացրին իրավական մեխանիզմներին զուգահեռ կայացնել ու ամրապնդել քաղաքական կոնֆլիկտների ինստիտուցիոնալացման ու կարգավորման ոչ իրավական մեխանիզմները:
- Նմանատիպ մեխանիզմների գործարկումն արդեն ենթադրում է երկխոսությանին հարթակների ստեղծում ու իշխանություն-ընդդիմություն բանակցությունների վարման ընթացակարգային ապահովում:
- Այդ տեսանկյունից, ինչպես քաղաքական ինստիտուտների միջև հնարավոր առճակատումներից խուսափելու, այնպես էլ քաղաքական հակամարտությունների և երկխոսությունների ինստիտուցիոնալացման տեսանկյունից պետք է ընդունել, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության նոր տարբերակը մի կողմից հանում է իշխանության ճյուղերի միջև հավանական հակամարտությունն ու լարվածությունը, իսկ մյուս կողմից՝ նախատեսում քաղաքական կոնֆլիկտների ինստիտուցիոնալացման ու երկխոսության հաստատման նոր հարթակներ:
- Միաժամանակ, սահմանադրական փոփոխություններով էականորեն կրճատվում և սահմանափակվում են ժողովրդի ուղղակի կամարտահայտության ու դելեգատիվ ժողովրդավարության կիրառման միջոցով քաղաքական գործընթացներին մասնակցության հնարավորությունները:
- Ուստի քաղաքական արսիենտիզմից խուսափելու ու օտարման զգացումը մեղմելու նպատակով արդարացված ենք համարում դելեգատիվ ժողովրդավարության փոխլրացումը դելիբերատիվ ժողովրդավարության մոդելով, որը ներառում է երկխոսությանին քաղաքական հաղորդակցության կառուցակարգեր, խորհրդակցական մարմինների ստեղծման ու իրական երկխոսության ռեժիմով քաղաքական որոշումների մշակման և/կամ ընդունման ընթացակարգեր:
- Որոշակի դրական դինամիկայով հանդերձ, պետք է փաստել, որ վերջին տարիներին հայաստանյան քաղաքական դաշտում ու քաղաքական զարգացումներում առավելապես նկատելի են սովերային հիմքով, օլիգոպոլիկ, կարտելային համաձայնություններ, որոնք, իրենց

հերթին, գործնականորեն անհնար են դարձնում արդյունավետ հանրային վերահսկողության իրականացումը նմանատիպ պայմանավորվածությունների կատարման նկատմամբ, ինչպես նաև էապես խոչընդոտում են իշխանության հաշվետվողականության ինստիտուտի կայացմանը:

- Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում տեղ գտած քաղաքական երկխոսությանի պրակտիկաների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկխոսության սուբյեկտային, բովանդակային ու ձևական կողմերի շեղման արդյունքում իրական քաղաքական երկխոսությունների փոխարեն մենք ավելի հաճախ գործ ենք ունենում քվազիերկխոսությանի պրակտիկաների՝ կրիպտոերկխոսության, քվազիերկխոսության, ծաղրախոսության կամ կեղծ երկխոսության ձևերի հետ:
- Մասնավորապես, ՀՀ քաղաքական պրակտիկայում «կեղծ» երկխոսության գործնական արտացոլանք են պետական իշխանության բարձրագույն մարմինների ներկայացուցիչների հրավիրած քաղաքական խորհրդակցությունների, կյոլր սեղանների մեծ մասը, որոնք երկխոսության բովանդակային ու առարկայական համապատասխանության խնդիրներ ունեն, քանի որ իրականում դրանք մենախոսային հաղորդակցման քողարկված տարբերակ են, այլ ոչ թե իրական քաղաքական երկխոսություն:
- Հետևաբար, իշխանությունների առաջնահերթ քայլերը պետք է նպատակաուղղված լինեն քաղաքական, տնտեսական ու սոցիալական բևեռացման թուլացմանը, կառավարման ավանդական՝ կոշտ, մենախոսային եղանակներից հրաժարմանը՝ հանդես գալով քաղաքական երկխոսություն ակտիվ նախաձեռնողի ու սուբյեկտի դերում:
- Այդ համատեքստում անհրաժեշտ է վերանայել իշխանության իրականացման ավանդական՝ մենախոսային ռազմավարությունն ու միակողմանի՝ հեռորձակման քաղաքական հաղորդակցությունից անցում կատարել երկխոսությանի հաղորդակցության պրակտիկային:
- Դրան զուգահեռ, հրապարակային քաղաքականության ու իշխանական որոշումների ընդունման գործընթացում առավել հաճախ պետք է կիրառվեն հասարակայնության հետ կապերի երկխոսության կողմնորոշում ունեցող (DOPR - Dialogue Oriented Public Relations) տեխնոլոգիաները:
- Իշխանության կողմից նման քաղաքականության որդեգրումը, իր հերթին, կարող է նպաստել հասարակական գիտակցության

մակարդակում որոշակի դրական տեղաշարժերին, իշխանություն - հասարակություն, իշխանություն - ընդդիմություն երկխոսության չարակտիվների հաճախականության ավելացմանը:

- Դրան նպաստող գործնական քայլերից մեկը կարող է լինել մշտական հիմունքներով գործող համահայկական կլոր սեղանի նախաձեռնությունը, որը կարող է համախմբել հայ հասարակության հնարավորինս լայն շերտերի՝ համազգային նշանակության գլոբալ խնդիրների լուծման նպատակով:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.

1. **Գալստյան Խ.** Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2016, N 3(21), էջ 57-67:
2. **Գալստյան Խ.** Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդավարության անցման համատեքստում // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2016, N 1(19), էջ 32-48:
3. **Գալստյան Խ.** Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման առանձնահատկությունները // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2015, N 1(16), էջ 35-48:
4. **Գալստյան Խ.** Հետսառըպատերազմյան աշխարհակարգի հիմնական պարադիգմերն ու քաղաքական երկխոսության արդիականությունը // 21-րդ Դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., 2014/1, էջ 34-56:
5. **Գալստյան Խ.** Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը հետմոդեռնիստական իրողություններում // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2013, N 6(139), էջ 50-59:
6. **Գալստյան Խ.** “HOMO DIALOGUS”. Նոր դարաշրջանի ֆենոմենը // Լրատու. Գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2013/2(15), էջ 24-32:

7. **Գալստյան Խ.** Կոստվոյի նախադեպն ու ԼՂՀ միջազգային ճանաչման հեռանկարները// Քաղաքագիտություն. Գիտական ժողովածու, Երևան, ԵՊՀ, 2008, էջ 65-76:
8. **Գալստյան Խ.** Բանակցային մշակույթի արմատավորման սաղմերը Հայաստանում // Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Բանբեր. գիտական աշխատություններ-3, Երևան, «Իրավունք», 2008, էջ 219-231:
9. **Գալստյան Խ.** Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական փոխակերպման գործընթացը// Քաղաքագիտություն, բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Երեւան, «ԵՊՀ հրատ.», 2007թ., էջ 116-127:
10. **Գալստյան Խ.** Ներծին (էնդոգեն) և արտածին (էկզոգեն) գործոնների ազդեցությունը ղարաբաղյան հակամարտության գենեզիսի եւ դինամիկայի վրա// Բանբեր: Գիտական աշխատություններ-1, 2006, պրակ Ա-Վանաձոր, Արմինֆո 2007թ, էջ 238-252:
11. **Գալստյան Խ.** Քաղաքական բանակցություններ. Տեսություն և պրակտիկա (մենագրություն), Եր., «Վան Արյան», 2007թ., 228 էջ:
12. **Գալստյան Խ.** Սկզբունքների համադրման գաղափարը ղարաբաղյան կարգավորման համատեքստում// «Մխիթար Գոշ» իրավական գիտամեթոդական հանդես, 2006/2, էջ 46-47:
13. **Գալստյան Խ.** Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները// 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկատվական-վերլուծական հանդես, Երևան, 2005/4, էջ 63-82:
14. **Գալստյան Խ.** Բանակցային գործընթացների ազդեցությունը ՀՀ քաղաքական կյանքի վրա (Ղարաբաղյան հակամարտության օրինակով) // «Վասն Արդարութեան», 2003թ., «Չանգակ- 97», նոյեմբեր-դեկտեմբեր, N47-48, էջ 51-59:
15. **Գալստյան Խ.** Քաղաքական բանակցությունների սուբյեկտների դասակարգման հարցի շուրջ / Գիտական աշխատություններ, հասարակական գիտություններ, պրակ 2, Երևան, «Լինգվա», 2003թ., էջ 207-218:
16. **Галстян Х.** Экзогенные и эндогенные факторы конституционных реформ в Армении. // ИППОКРЕНА. Научно-методический журнал. Институт Парламентаризма и Предпринимательства, Беларусь, Минск, 2016, N 2, с. 70-74.
17. **Галстян Х.** Перспективы урегулирования этнополитических конфликтов в рамках Евразийского интеграционного проекта. / Политическая наука перед вызовами современной политики. Материалы VII Всероссийского конгресса

- политологов, Москва, 19–21 ноября 2015 г./ Под общ. ред. О. В. Гаман-Голутвиной, Л. В. Сморгунова, Л. Н. Тимофеевой — Изд. «Аспект Пресс», 2015, с. 150-152.
18. **Галстян Х.** “SMART POWER” в российской внешней политике: время “благоразумной силы”/ Управление в XXI веке. Сборник статей по материалам Международной научно-практической конференции, НИУ “БелГУ”, 2015, с. 43-46.
 19. **Галстян Х.** Проблема политического диалога в посмодернистском дискурсе современности. // Вестник Брестского Университета. Серия 1, Философия, Политология, Социология, Брест, 2015/1, с. 82-87.
 20. **Галстян Х.** Как вырваться из паутины? // Беларуская думка, Минск, 2015/2, с. 50-54.
 21. **Галстян Х.** Политическая диалогистика: в поисках новой парадигмы (научная монография), Saarbrücken, Deutschland, LAMBERT Academic Publishing, 2014, 80 с.
 22. **Галстян Х.** “HOMO DIALOGUS” как основная проблема политической диалогистики. // Politbook, НИИ “Общественных и политических наук”, Чебоксары, 2013/4, с. 140-147.
 23. **Галстян Х.** Карабахский конфликт: перспективы переговорного процесса // «Изменяющееся общество: теория и практика», 2001/1-2, с. 53-57.

Թեմայի շուրջ հեղինակը հանդես է եկել նաև հետևյալ հրապարակումներով.

24. **Չալստյան Խ.** Բանակցային տեխնոլոգիաներ (ուսումնական ձեռնարկ), Եր., 2016թ., «Ոսկան Երևանցի», 192 էջ:
25. **Չալստյան Խ.** Խորհրդարանական դիվանագիտության ռեսուրսները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում // «Հայրուսակ» համալսարանի 5-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Նահապետ», 2006թ, էջ 237-241:
26. **Չալստյան Խ.** Քաղաքական բանակցությունների իրավական հիմքերը և սկզբունքները // Իրավագիտության հարցեր, գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Եր., ԵՊՀ, 2003/1, էջ 83-87:
27. **Галстян Х.** В поисках формирования евразийских ценностей: насколько актуальна идея? / Евразийское пространство в условиях глобализации. /Сборник материалов круглого стола в рамках форума молодых политологов “Историческая и культурная общность народов стран СНГ”, Москва, 6-13 сентября 2015г., М., ИИСИ, 2015г. с. 16-22:
28. **Галстян Х.** Кризисная дипломатия России в контексте реализации “SMART POWER” стратегии / Проблемы национальной безопасности в условиях глобализации и интеграционных процессов (междисциплинарные аспекты). Материалы Международной Научной Конференции, Ереван, Изд. РАУ, 2015, с. 199-204.

29. **Галстян Х.** Парадигмы PCW(Post Cold War) миропорядка в контексте становления политической диалогистики / Проблемы национальной безопасности в условиях глобализации (междисциплинарные аспекты). Материалы республиканской научной конференции. Ер., Изд-го РАУ, 2015, с. 62-82.
30. **Галстян Х.** Сочинская инициатива Президента России: qui prodest эскалация карабахского конфликта?/Российский Кавказ: вчера, сегодня, завтра. Материалы Международного политологического форума, Махачкала, 2014, Т. 2, с. 331-335.
31. **Галстян Х.** Армяно-российские взаимоотношения в контексте евразийского диалога. / Внешняя политика Республики Армения. Проблемы и вызовы. Материалы научно-практической конференции, Ер., Изд.-во “ЕГУ”, 2014, с. 108-116.
32. **Галстян Х.** Политическая диалогистика: искусство жить вместе. // Россия после мирового кризиса: новые вызовы, новые возможности?// Материалы VI конвента РАМИ, Москва, МГИМО-Университет, 2011. с. 138-146.
33. **Галстян Х.** Геополитическая трансформация Карабахского конфликта. / Актуальные проблемы социальных коммуникаций и связей с общественностью // Материалы Международной научно-практической конференции 28-29 января 2008г. ч. 1. Краснодар: Кубан. гос. ун-т, 2008, с.231-245.
34. **Галстян Х.** Россия в Закавказье: посредническая роль в урегулировании карабахского конфликта. / Десять лет внешней политики России: Материалы Первого конвента Российской ассоциации международных исследований/ под ред. А.В. Торкунова.-М., РОССПЭН, 2003. с. 283-288.

**НАЦИОНАЛЬНЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ УНИВЕРСИТЕТ
ОБОРОНЫ МО РА**

ГАЛСТЯН ХАЧИК САМВЕЛОВИЧ

**ПРОБЛЕМА ПОЛИТИЧЕСКОГО ДИАЛОГА В КОНТЕКСТЕ
СОВРЕМЕННЫХ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ
ТРАНСФОРМАЦИЙ**

**Диссертация на соискание ученой степени доктора политических наук по специальности 23.00.01 - “Теория политической науки”
Защита состоится 28 апреля 2017г., в 15:00, на заседании специализированного совета ВАК РА 056 “Политология” при Национальном исследовательском университете обороны МО РА (0037, г. Ереван, ул. К. Улнеци, 56/6)**

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблеме выявления роли и места политического диалога в контексте современных общественно-политических трансформаций. Актуальность темы исследования обусловлена тем, что в современном мире происходят глобальные изменения, которые, в свою очередь, оказывают определенное воздействие как на политическую самоорганизацию общества, так и на методологию осуществления политики, здесь также выдвигая новые повестки и парадигмы. В частности, при нынешних социально-политических реалиях, когда пространственно-временные параметры политики сильно изменяются, глобальные неопределенности, политические кризисы и внутривнутриполитические конфликты становятся основными характеристиками нашей эпохи, когда прежние вертикальные механизмы осуществления власти меняются более мягкими технологиями воздействия, в общественно-политическом дискурсе современности более востребованными становятся диалоговые политические технологии, а исследования, направленные на формирование новой парадигмы политического диалога и раскрытия потенциала диалоговых форм политической коммуникации, приобретают особую важность и актуальность.

В контексте современных демократических преобразований можно наблюдать, что все новые регионы, государства и внутригосударственные субъекты, в том числе политические партии и организации, социальные группы и люди вовлекаются в процессы демократизации политической системы общества. Такая большая

вовлеченность политических акторов, в свою очередь, требует внедрения новых процедур согласования социально значимых и политических интересов субъектов политики, владения практическими навыками принятия компромиссных решений, умения переходить от традиционных, линейных, монологических форм политической коммуникации к нелинейным, диалоговым стратегиям осуществления власти.

В структурном плане диссертация состоит из введения, пяти глав, заключения, библиографии и приложения. Общий объем исследования составляет 312 страниц.

Во введении обосновывается актуальность темы, определяются объект, предмет, цели и задачи исследования, степень научной разработанности и методология работы, дается научная новизна, основные положения, выносимые на защиту, теоретическая и практическая значимость исследования, апробация и внедрение результатов работы.

В первой главе – ***"Проблема политического диалога в общественно - политическом дискурсе"***, обсуждаются теоретические основы и эволюционные закономерности развития политического диалога в контексте общественно-политической мысли античного, средневекового, нового и новейшего времени. Здесь предметом исследования становятся вопросы генезиса понятия "диалог", раскрытие роли и значения диалога в контексте культурно-духовного и общественно-политического наследия античной, средневековой и новой эпохи, и, в частности, в контексте посмодернистских реалий. В работе обосновывается дихотомический характер политического диалога начиная с античной эпохи.

Во второй главе – ***"Политическая диалогистика: концептуальные контуры новой парадигмы"***, на основе анализа основных парадигм, объясняющих новый мировой порядок после окончания холодной войны, обосновывается актуальность политической диалогистики как новой парадигмы в политической науке, а также уточняются вопросы определения проблемного и предметного поля политической диалогистики. Автор отмечает, что в эпоху глобальных неопределенностей, на фоне повышения конфликтной напряженности в разных горячих точках планеты диалогические парадигмы становятся одними из самых востребованных в общественно-политическом дискурсе современности. В качестве основной проблемы политической диалогистики автор выделяет проблему становления "HOMO DIALOGUS"-а, как феномена нового

тысячелетия в противовес доминирующей стратегии человеческого поведения в лице “НОМО CONFLICTUS”.

В третьей главе диссертации – *“Диалогические технологии политической коммуникации”*, рассматриваются линейные и нелинейные модели политической коммуникации, раскрываются характерные черты и особенности диалогической политической коммуникации, предметом исследования становятся классификация диалогических практик, диалогические технологии принятия политических решений, а также вопросы применения диалогических стратегий осуществления власти. Развивая нелинейные традиции школы политической коммуникации, автор выдвигает диалог-ориентированную модель связи с общественностью (DOPR) в качестве важной стратегии повышения эффективности PR-деятельности в вопросе предотвращения и урегулирования конфликтов в политике.

В четвертой главе – *“Проблема политического диалога в контексте перехода к демократии”*, рассматриваются вопросы выявления роли политического диалога в процессе перехода и консолидации демократии. В контексте “третьей волны” демократизации анализируются диалогические переходы в странах Центральной и Восточной Европы, выявляются основные факторы и закономерности этого процесса. Автор приходит к выводу, что если на первом этапе перехода к демократии возможны как конфликтные, так и диалогические переходы, то институциональная консолидация демократии возможна только диалогическим способом, путем согласия или же лояльности между основными политическими силами по поводу институционального устройства государства и основных правил политической игры. В этом контексте, среди факторов, влияющих на процесс становления демократии, автор выделяет культуру политического диалога как важную предпосылку консолидации демократии.

В пятой главе – *“Проблема политического диалога в контексте демократических реформ в Республике Армения”*, обсуждаются вопросы становления политической системы РА, институционализации диалогических практик и роль формирования культуры политического диалога в деле демократических реформ политической системы Армении. Автор отмечает, что для политической системы Республики Армения, которая находится на стадии консолидации демократии, чрезвычайно важным является внедрение механизмов политического диалога, формирование и укрепление в общественном сознании

армянского общества культуры политического диалога как важного условия демократической консолидации.

В заключительной части работы представлены основные результаты исследования, теоретические, практические выводы и рекомендации.

Основные положения исследования представлены в 2 монографиях, 1 учебном пособии и более чем 30 научных публикациях автора.

ԽՈՏԻՔ ՏԱՄՎԵԼԻ ԳԱԼՏՅԱՆ

THE PROBLEM OF POLITICAL DIALOGUE IN THE CONTEXT OF CONTEMPORARY SOCIAL AND POLITICAL TRANSFORMATIONS

Dissertation under the specialization of 23.00.01 - "The theory of political science" aspiring to earn a Doctoral Degree in Political Science

The public defence of the dissertation will take place on April 28, 2017, at 15:00, in the National defense research university MOD RA at HAC Specialized Chamber session. (Address: K. Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Republic of Armenia)

SUMMARY

The main objective of the dissertation is to analyze the role and place of political dialogue in the context of contemporary social and political transformations. The urgency of the research topic is conditioned by the fact that global transformations take place in the modern world, that, in turn, have an impact both on political self-organization of society, and the methodologies of policy implementation, which also bring forward new agenda and paradigms. In particular, in the current socio-political realities, when the space-time policy settings are strongly changed, when global uncertainties, political crises and internal conflicts are the main characteristics of our era, when the previous vertical mechanisms of the power implementation are changing into soft impact technologies, dialogue political technologies are becoming more needed in the socio-political discourse of modernity, and research aimed at the formation of a new

paradigm of political dialogue and disclosure dialogue forms of political communication capacities are of particular importance and urgency.

New regions, states and national actors, including political parties and organizations, social groups and people involved in the processes of democratization of the political system of society can be observed in the context of modern democratic transformations. Such a large involvement of the political actors, in turn, requires the introduction of new procedures for harmonizing relevant social and political interests of political actors, possession of compromise decision making practical skills, the ability to move from traditional, linear, monological forms of political communication to non-linear, dialogue strategies of power implementation.

The thesis consists of an introduction, five chapters, conclusions, bibliography and appendices. The thesis overall makes up 312 pages.

In the introduction the urgency of the subject is presented, the object and subject of the study are defined, the degree of scientific elaboration, methodology of dissertation and the scientific novelty are described, the main provisions for the defense, theoretical and practical significance of the research are discussed, testing and implementation of the results of the work are described.

In the first chapter - "***The problem of the political dialogue in the socio-political discourse***", the theoretical basis and evolutionary patterns of development of the political dialogue in the context of social and political thought of ancient, medieval, modern and contemporary times are discussed. The subjects of research are the genesis of the concept of "dialogue", the disclosure of the role and importance of dialogue in the context of cultural, spiritual and socio-political heritage of ancient, medieval and modern times, and in particular, in the context of post-modernist realities. Dichotomous nature of the political dialogue since ancient times is described.

The second chapter - "***Political dialogistics: conceptual outline of a new paradigm***", is based on the analysis of the main paradigms that explain the new world order after the Cold War, the urgency of political dialogistics as a new paradigm in political science, but also clarifies issues of definition of the problem and the subject field of the political dialogistics. The author notes that in the era of global uncertainty, against the background of increasing conflict tension in different hot spots of the world dialogical paradigm become one of the most popular in the socio-political discourse of modernity. As the main issue of political dialogistics author identifies the problem of becoming "HOMO DIALOGUS" as a phenomenon of the new millennium, in contrast to the dominant strategy of human behavior in the face of "HOMO CONFLICTUS".

In the third chapter of the thesis - ***"Dialogic political communication technologies"***, linear and non-linear models of political communication are discussed, the characteristics and features of dialogic political communication are revealed. The subject of research is the classification of dialogical practices, dialogical technology of political decision-making, as well as the issues of application of dialogical strategies of the power implementation. In the paper, developing nonlinear school tradition of political communication, the author puts forward the dialogue-oriented model of public relations (DOPR) as an important strategy to improve the effectiveness of PR-activity in the prevention and resolution of conflicts in politics.

In the fourth chapter - ***"The problem of the political dialogue in the context of the transition to democracy"***, the issues related to the identification of the role of political dialogue in the process of transition and consolidation of democracy in the context of the "third wave" of democratization are considered, dialogical transitions in Central and Eastern Europe are analyzed, the main factors and regularities of this process are identified. The author concludes that if in the first phase of the transition to democracy there may be both a conflict and dialogical transitions, the institutional consolidation of democracy can only be by means of dialogic way, agreement or loyalty between the major political actors about the institutional organization of the state and the basic rules of the political game. In this context, among the factors influencing the process of democratic development, the author highlights the culture of political dialogue as an essential prerequisite of democracy consolidation.

In the fifth chapter - ***"The problem of the political dialogue in the context of democratic reforms in the Republic of Armenia"***, formation of the Armenian political system, the institutionalization of dialogue practices and the role of shaping the culture of political dialogue in democratic reforms of Armenia's political system are discussed. The author notes that for the political system of the Republic of Armenia, which is in the stage of consolidation of democracy, it is extremely important to introduce the mechanisms of political dialogue, the formation and strengthening of the public consciousness of Armenian society's culture of political dialogue as an important condition of democratic consolidation.

In the terminal part of the dissertation author presents the main results of the study, theoretical and practical conclusions and recommendations.

The main provisions are presented in 2 monographs, 1 manual and more than 30 scientific publications of the author.